

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻՋԵՎ**  
**ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ**  
**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետությունը և Ճապոնիան (այսուհետև՝ Պայմանավորվող կողմեր),

ցանկանալով խրախուսել ներդրումները՝ Պայմանավորվող կողմերի միջև տնտեսական հարաբերություններն ամրապնդելու նպատակով,

ձգտելով մի Պայմանավորվող կողմի ներդրողների կողմից մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ավելի մեծ ներդրումների համար ստեղծել կայուն, արդարացի, բարենպաստ և թափանցիկ պայմաններ,

ընդունելով ներդրողների նախաձեռնությունը խրախուսելու և երկու Պայմանավորվող կողմերի բարեկեցությունը խթանելու համար ներդրումների աստիճանական ազատականացման մեծացող կարևորությունը,

ընդունելով, որ այս նպատակներին կարելի է հասնել՝ չթուլացնելով ընդհանուր կիրառության՝ առողջապահական, անվտանգության և բնապահպանական միջոցները, և

ընդունելով Պայմանավորվող կողմերի միջև ներդրումների խրախուսման հարցում աշխատողների և վարչակազմի միջև համագործակցային հարաբերությունների կարևորությունը,

համաձայնեցին հետևյալի մասին.

**ԳԼՈՒԽ I**  
**ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ**

**Հոդված 1**  
**Սահմանումները**

Սույն Համաձայնագրի նպատակներով՝

(a) «**ներդրում**» եզրույթը նշանակում է՝ ցանկացած տեսակի ակտիվ, որը ներդրողի սեփականությունն է կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվում է նրա կողմից, ներառյալ՝

(i) ձեռնարկություն կամ ձեռնարկության մասնաճյուղ,

(ii) բաժնեմասեր, բաժնետոմսեր կամ ձեռնարկության կապիտալում

մասնակցության այլ ձևեր,

- (iii) պարտատոմսեր, չապահովված պարտատոմսեր, փոխառություններ ու պարտքի այլ տեսակներ,
- (iv) ֆյուչերսներ, օպցիոններ և այլ ածանցյալ գործիքներ,
- (v) պայմանագրերից բխող իրավունքներ, ներառյալ՝ «Թըրնքի (Turnkey)», շինարարական, կառավարման, արտադրության կամ եկամուտների բաշխման մասին պայմանագրերը,
- (vi) դրամական պահանջներ և պահանջներ ֆինանսական արժեք ներկայացնող պայմանագրի ցանկացած գործողության նկատմամբ.
- (vii) մտավոր սեփականության իրավունքներ, ներառյալ՝ հեղինակային իրավունքները և հարակից իրավունքները, արտոնագրային իրավունքները և օգտակար մոդելների, ապրանքային նշանների, արդյունաբերական նմուշների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների, բույսերի նոր սորտերի, ֆիրմային անվանումների նկատմամբ իրավունքները, ծագման մասին նշումները կամ աշխարհագրական տեղանուններն ու չբացահայտված տեղեկատվությունը,
- (viii) օրենքներով ու կանոնակարգերով կամ պայմանագրերով վերապահված այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են՝ կոնցեսիաները, լիցենզիաները, լիազորություններն ու թույլտվությունները, ներառյալ բնական ռեսուրսների ուսումնասիրությունների և շահագործման համար տրվողները, և
- (ix) ցանկացած այլ նյութական և ոչ նյութական, շարժական և անշարժ գույք և դրա հետ կապված ցանկացած գույքային իրավունքներ, ինչպիսիք են՝ վարձակալությունը, հիփոթեքը, գրավը և գրավականը:

Ներդրումը ներառում է ներդրումներից ստացված գումարները, մասնավորապես՝ շահույթը, տոկոսը, կապիտալի հավելածը, շահաբաժինները, ռոյալթիները և վճարները: Ակտիվների ներդրման ձևի փոփոխությունը չի ազդում դրանց բնույթի վրա՝ որպես ներդրումի.

- (b) **«ներդրումային համաձայնագիր»** եզրույթը նշանակում է՝ մի Պայմանավորվող կողմի կենտրոնական կամ տեղական կառավարման մարմնի կամ իշխանության և մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի կամ նրա ներդրումի, որն առաջին Պայմանավորվող կողմի տարածքում հանդիսանում է ձեռնարկություն, միջև գրավոր համաձայնություն, որը հիմք է հանդիսանում ներդրողի կամ ներդրման համար առաջին Պայմանավորվող կողմում ներդրում կատարելու կամ ձեռք բերելու մասով:

Գրավոր համաձայնությունը վերաբերում է երկու Կողմերի կողմից մեկ կամ մի քանի փաստաթղթերով կատարվող գրավոր համաձայնագրին, որով նախատեսվում են երկու Կողմերի համար պարտադիր փոխադարձ իրավունքներ և պարտավորություններ՝ 24-րդ հոդվածի 11-րդ կետի (b) ենթակետին համապատասխան կիրառելի օրենքի համաձայն: Առավել հստակության համար՝ վարչական կամ դատական մարմնի միակողմանի ակտը, ինչպիսիք են՝ Պայմանավորվող կողմի կողմից միայն իր կարգավորիչ իրավասության սահմաններում տրվող թույլտվությունը, լիցենզիան կամ լիազորությունը կամ առանձին որոշումը, հրամանը կամ վճիռը, առանձին վերցրած, և վարչական կամ դատական մարմնի՝ համաձայնության վերաբերյալ որոշումը կամ հրամանը չեն համարվում գրավոր համաձայնագիր:

(c) «**Պայմանավորվող կողմի ներդրող**» եզրույթը նշանակում է.

(i) ֆիզիկական անձ, ով ունի այդ Պայմանավորվող կողմի քաղաքացիություն՝ նրա գործող օրենքների և կանոնակարգերի համաձայն, կամ

(ii) այդ Պայմանավորվող կողմի ձեռնարկություն, որը ցանկանում է կատարել, կատարում է կամ կատարել է ներդրումներ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում.

(d) «**ձեռնարկություն**» եզրույթը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ անձ՝ կիրառելի օրենքների և կանոնակարգերի համաձայն պատշաճ կերպով հիմնադրված կամ կազմակերպված, շահույթ հետապնդող կամ չհետապնդող և մասնավոր կամ պետական սեփականություն հանդիսացող կամ պետության հսկողության ներքո գտնվող, ներառյալ՝ ցանկացած կորպորացիա, տրեստ, ընկերակցություն, անհատ ձեռնարկատեր, համատեղ գործունեություն, միավորում, կազմակերպություն կամ ընկերություն.

(e) «**Պայմանավորվող կողմի ձեռնարկություն**» եզրույթը նշանակում է՝ Պայմանավորվող կողմի գործող օրենքների և կանոնակարգերի համաձայն պատշաճ կերպով հիմնադրված կամ կազմակերպված ձեռնարկություն.

(f) «**ներդրումային գործունեություն**» եզրույթը նշանակում է՝ հիմնադրում, ձեռքբերում, ընդլայնում, շահագործում, կառավարում, պահպանում, օգտագործում, տիրապետում և վաճառք կամ այլ ձևով ներդրումների փոխանցում.

(g) «**տարածք**» եզրույթը նշանակում է՝ Պայմանավորվող կողմի համար այդ Պայմանավորվող կողմի տարածքը և բացառիկ տնտեսական գոտին ու մայրցամաքային շելֆը, որոնց նկատմամբ այդ Պայմանավորվող կողմը, միջազգային իրավունքի համաձայն, իրականացնում է իր ինքնիշխան

իրավունքները կամ իրավագործությունը.

- (h) «**գոյություն ունեցող**» եզրույթը նշանակում է՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ գործող.
- (i) «**ազատ փոխարկելի արժույթ**» եզրույթը նշանակում է՝ ազատ փոխարկելի արժույթ, ինչպես սահմանված է Արժույթի միջազգային հիմնադրամի համաձայնագրի հոդվածներով.
- (j) «**ԱՀԿ համաձայնագիր**» եզրույթը նշանակում է՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման Մարաքեշի համաձայնագիր՝ ստորագրված 1994 թվականի ապրիլի 15-ին՝ Մարաքեշում.
- (k) «**ՄՄԻԱԱ համաձայնագիր**» եզրույթը նշանակում է՝ «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող ասպեկտների մասին» համաձայնագիր՝ ԱՀԿ համաձայնագրի 1(C) հավելվածի համաձայն.
- (l) «**հայցվոր**» եզրույթը նշանակում է՝ Պայմանավորվող կողմի ներդրող, որը մյուս Պայմանավորվող կողմի հետ ներդրումային վեճի կողմ է.
- (m) «**պատասխանող**» եզրույթը նշանակում է՝ Պայմանավորվող կողմ, որը ներդրումային վեճի կողմ է.
- (n) «**վեճի կողմ**» եզրույթը նշանակում է՝ հայցվոր կամ պատասխանող.
- (o) «**վեճի կողմ չհանդիսացող կողմ**» եզրույթը նշանակում է՝ այն Պայմանավորվող կողմը, որը ներդրումային վեճի կողմ չէ.
- (p) «**դատարան**» եզրույթը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության համար՝ ընդհանուր իրավասության դատարան կամ վարչական դատարան, Ճապոնիայի համար՝ Արդարադատության դատարան.
- (q) «**ՆՎԿՄԿ**» եզրույթը նշանակում է՝ Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոն.
- (r) «**ՆՎԿՄԿ լրացուցիչ միջոցի վերաբերյալ կանոններ**» եզրույթը նշանակում է՝ Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի քարտուղարության կողմից գործերի քննության լրացուցիչ միջոցը կարգավորող կանոններ.
- (s) «**ՆՎԿՄԿ կոնվենցիա**» եզրույթը նշանակում է՝ «Պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումային վեճերի կարգավորման մասին» կոնվենցիա՝ ստորագրված 1965 թվականի մարտի 18-ին Վաշինգտոնում.

- (t) «Նյու Յորքի կոնվենցիա» եզրույթը նշանակում է «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» կոնվենցիա՝ ստորագրված 1958 թվականի հունիսի 10-ին Նյու Յորքում.
- (u) «ՄԱԿՄԱԻՀ արբիտրաժային կանոններ» եզրույթը նշանակում է Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի արբիտրաժային կանոններ:

## **Հոդված 2 Ազգային ռեժիմը**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին և նրանց ներդրումներին տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը նմանատիպ հանգամանքներում տրամադրում է իր սեփական ներդրողներին և նրանց ներդրումներին՝ ներդրումային գործունեության մասով:

2. 1-ին կետը չի մեկնաբանվում որպես Պայմանավորվող կողմի կողմից այնպիսի միջոց ընդունելու կամ իրականացնելու համար խոչընդոտ, որով սահմանվում են նրա տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումային գործունեության հետ կապված հատուկ պահանջներ՝ պայմանով, որ այդ հատուկ պահանջները չխաթարեն սույն Համաձայնագրի ներքո նման ներդրողների իրավունքների էությունը:

## **Հոդված 3 Առավել բարենպաստության ռեժիմ**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին և նրանց ներդրումներին տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը նմանատիպ հանգամանքներում տրամադրում է Պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի ներդրողներին և նրանց ներդրումներին՝ ներդրումային գործունեության մասով:

Առավել հստակության համար՝ սույն հոդվածում նշված ռեժիմը չի ներառում որևէ միջազգային համաձայնագրով նախատեսված վեճի լուծման միջազգային ընթացակարգեր կամ մեխանիզմներ:

## **Հոդված 4 Ընդհանուր ռեժիմը**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումներին տրամադրում է օտարերկրացիներին տրամադրվող ռեժիմի նվազագույն չափորոշիչ, միջազգային իրավունքին համապատասխան, ներառյալ՝ արդար և հավասար ռեժիմ և լիարժեք պաշտպանություն ու անվտանգություն:

## **Հոդված 5 Դատարանների հասանելիությունը**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը նմանատիպ հանգամանքներում տրամադրում է իր սեփական ներդրողներին կամ Պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի ներդրողներին բոլոր ատյանների մակարդակով նման ներդրողների իրավունքների և՛ իրացման, և՛ պաշտպանության նպատակով դատարանների և վարչական մարմինների հասանելիության մասով:

## **Հոդված 6**

### **Կատարման պահանջների արգելքը**

1. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը չի կարող իր տարածքում Պայմանավորվող կողմի կամ Պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի ներդրողի ներդրումային գործունեության հետ կապված սահմանել կամ կիրառել հետևյալ պահանջներից որևէ մեկը կամ պարտադրել ստանձնել որևէ պարտավորություն կամ հանձնառություն.

- (a) արտահանել որոշակի մակարդակի կամ տոկոսով արտահայտված քանակությամբ ապրանքներ կամ ծառայություններ.
- (b) ապահովել հայրենական արտադրության որոշակի մակարդակ կամ տոկոսով արտահայտված քանակություն.
- (c) գնել, օգտագործել կամ նախապատվություն տալ իր տարածքում արտադրված ապրանքներին կամ մատուցված ծառայություններին կամ իր տարածքում ֆիզիկական անձանցից կամ ձեռնարկություններից գնել ապրանքներ կամ ծառայություններ.
- (d) որևէ կերպով կապել ներմուծումների ծավալը կամ արժեքը արտահանումների ծավալի կամ արժեքի հետ կամ ներդրողի ներդրումների շրջանակներում արտարժույթի ներհոսքի չափի հետ.
- (e) սահմանափակել իր տարածքում ապրանքների կամ ծառայությունների վաճառքը, որոնք ներդրողի ներդրումների միջոցով արտադրվում կամ մատուցվում են՝ նման վաճառքը որևէ կերպով կապելով իր արտահանումների ծավալի կամ արժեքի կամ արտարժույթի մուտքերի հետ.
- (f) սահմանափակել արտահանումը կամ արտահանման համար վաճառքը.
- (g) որպես գործադիր ղեկավարների, կառավարիչների կամ տնօրենների խորհրդի անդամների նշանակել որևէ կոնկրետ քաղաքացիություն ունեցող անձանց.
- (h) փոխանցել տեխնոլոգիա, արտադրական գործընթաց կամ այլ արտոնագրված գիտելիք իր տարածքում ֆիզիկական անձի կամ ձեռնարկության.

- (i) ընդունել՝
  - (i) լիցենզիայի պայմանագրի ներքո ոռոյալթի կոնկրետ դրույքաչափ կամ գումար, կամ
  - (ii) լիցենզիայի պայմանագրի ժամկետի որոշակի տևողություն, ցանկացած լիցենզիայի պայմանագրի առնչությամբ, որն ազատորեն կնքվել է ներդրողի և իր տարածքում ֆիզիկական անձի կամ ձեռնարկության միջև՝ անկախ նրանից՝ այն ուժի մեջ է մտել, թե ոչ, եթե պահանջը սահմանվել է, կամ պարտավորության կամ հանձնառության ստանձնումը պարտադրվել է Պայմանավորվող կողմի պետական իշխանության իրականացման միջոցով։ Սույն ենթակետում նշված «լիցենզիայի պայմանագիր»-ը նշանակում է՝ ցանկացած լիցենզիայի պայմանագիր, որը վերաբերում է տեխնոլոգիայի, արտադրական գործընթացի կամ այլ արտոնագրված գիտելիքի փոխանցմանը։
- (j) ներդրողի՝ կոնկրետ տարածաշրջանի կամ համաշխարհային շուկայի համար կենտրոնական գրասենյակը տեղակայել իր տարածքում։
- (k) աշխատանքի վերցնել իր՝ որոշակի թվով կամ տոկոսով քաղաքացիների։
- (l) ապահովել իր տարածքում հետազոտությունների և մշակումների որոշակի մակարդակ կամ արժեք, կամ
- (m) ներդրողի կողմից արտադրվող ապրանքներից կամ ներդրողի կողմից մատուցվող ծառայություններից մեկը կամ մի քանիսը կոնկրետ տարածաշրջան կամ համաշխարհային շուկա մատակարարել բացառապես իր տարածքից։

2. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը չի կարող իր տարածքում Պայմանավորվող կողմի կամ Պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի ներդրողի ներդրումային գործունեության հետ կապված առավելություն ստանալը կամ դրա ստանալը շարունակելը պայմանավորել հետևյալ պահանջներից որևէ մեկով։

- (a) ապահովել հայրենական արտադրության որոշակի մակարդակ կամ տոկոսով արտահայտված քանակություն։
- (b) գնել, օգտագործել կամ նախապատվություն տալ իր տարածքում արտադրված ապրանքներին կամ իր տարածքում ֆիզիկական անձից կամ ձեռնարկությունից գնել ապրանքներ։
- (c) որևէ կերպով կապել ներմուծումների ծավալը կամ արժեքը արտահանումների ծավալի կամ արժեքի կամ ներդրողի ներդրումների շրջանակներում արտարժույթի ներհոսքի չափի հետ։
- (d) սահմանափակել իր տարածքում ապրանքների կամ ծառայությունների վաճառքը, որոնք ներդրողի ներդրումների միջոցով արտադրվում կամ մատուցվում են՝ նման վաճառքը որևէ կերպով կապելով իր արտահանումների

ծավալի կամ արժեքի կամ արտարժույթի մուտքերի հետ, կամ

(e) սահմանափակել արտահանումը կամ արտահանման համար վաճառքը:

3. (a) 2-րդ կետում ոչինչ չի մեկնաբանվում այնպես, որ խոչընդոտի Պայմանավորվող կողմին իր տարածքում Պայմանավորվող կողմի կամ Պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի ներդրողի ներդրումային գործունեության հետ կապված առավելություն ստանալը կամ դրա ստանալը շարունակելը պայմանավորել իր տարածքում արտադրություն իրականացնելու, ծառայություն մատուցելու, աշխատողների վերապատրաստում անցկացնելու կամ աշխատողներ վարձելու, հատուկ շինություններ կառուցելու կամ ընդարձակելու կամ հետազոտություններ ու մշակումներ իրականացնելու պահանջի կատարման հանգամանքով:

(b) 1(h) ենթակետը չի կիրառվում, երբ պահանջը վերաբերում է մտավոր սեփականության իրավունքների փոխանցմանը, որը չի իրականացվել ՄՍԻԱԱ համաձայնագրին համապատասխան ձևով:

(c) 1(h) և 1(i) ենթակետերը չեն կիրառվում, երբ պահանջը սահմանվում, կամ պարտավորության կամ հանձնառության ստանձնումը պարտադրվում է դատարանի կամ մրցակցության հարցերով զբաղվող մարմնի կողմից՝ մրցակցության մասին օրենքի ենթադրյալ խախտումը վերացնելու նպատակով:

(d) 2(a) և 2(b) ենթակետերը չեն կիրառվում ներմուծող Պայմանավորվող կողմի սահմանած այն պահանջների մասով, որոնք վերաբերում են արտոնյալ սակագներ կամ արտոնյալ քվոտաներ որակելու համար անհրաժեշտ ապրանքների քանակությանը:

4. 1-ին և 2-րդ կետերը, այդ կետերում նշված պահանջներից բացի, ցանկացած այլ պահանջի նկատմամբ չեն կիրառվում:

## **Հոդված 7**

### **Չհամապատասխանող միջոցներ**

1. 2-րդ, 3-րդ և 6-րդ հոդվածները չեն կիրառվում.

(a) գոյություն ունեցող որևէ չհամապատասխանող միջոցի նկատմամբ, որը, ինչպես նշված է I հավելվածի՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համար նախատեսված առդիրում, իրականացվել է՝

(i) Պայմանավորվող կողմի կենտրոնական իշխանության կողմից, կամ

(ii) Հայաստանի Հանրապետության վարչական շրջանի կամ Ճապոնիայի պրեֆեկտուրայի կողմից.



Սույն հոդվածի նպատակով «վարչական շրջան» եզրույթը նշանակում է մարզը կամ Երևան քաղաքը.

- (b) գոյություն ունեցող որևէ չհամապատասխանող միջոցի նկատմամբ, որն իրականացվում է տեղական կառավարման մարմնի կողմից, բացառությամբ (a)(ii) ենթակետում նշված վարչական շրջանի կամ պրեֆեկտուրայի.
- (c) (a) և (b) ենթակետերում նշված որևէ չհամապատասխանող միջոցառման շարունակման կամ անհապաղ վերականգնման նկատմամբ, կամ
- (d) (a) և (b) ենթակետերում նշված որևէ չհամապատասխանող միջոցառման լրացման կամ փոփոխության նկատմամբ, պայմանով, որ այդ լրացումը կամ փոփոխությունը չի նվազեցնում միջոցի՝ 2-րդ, 3-րդ և 6-րդ հոդվածներին համապատասխանությունը, որն առկա էր լրացումից կամ փոփոխությունից անմիջապես առաջ:

2. 2-րդ, 3-րդ և 6-րդ հոդվածները չեն կիրառվում որևէ միջոցի նկատմամբ, որը Պայմանավորվող կողմի կողմից ընդունվում կամ իրականացվում է II հավելվածի՝ իր համար նախատեսված առդիրում նշված ոլորտների, ենթաոլորտների կամ գործունեության առնչությամբ:

3. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո ընդունված և II հավելվածի՝ իր համար նախատեսված առդիրում նշված միջոցին համապատասխան՝ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողից նրա քաղաքացիության հիմքով չի պահանջում վաճառել կամ այլ կերպով տնօրինել այն ներդրումը, որ գոյություն ունի միջոցի՝ ուժի մեջ մտնելու պահի դրությամբ:

4. Եթե Պայմանավորվող կողմը I հավելվածի՝ իր համար նախատեսված առդիրում նշված գոյություն ունեցող չհամապատասխանող միջոցի լրացում կամ փոփոխություն է կատարում, կամ եթե Պայմանավորվող կողմը սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո II հավելվածի՝ իր համար նախատեսված առդիրում նշված ոլորտների, ենթաոլորտների կամ գործունեության առնչությամբ որևէ նոր կամ ավելի սահմանափակող միջոց է ընդունում, Պայմանավորվող կողմը լրացում կամ փոփոխություն կատարելուց կամ նոր կամ ավելի սահմանափակող միջոց իրականացնելուց առաջ կամ, բացառիկ հանգամանքներում դրանից հետո՝ հնարավորինս շուտ.

- (a) ծանուցում է մյուս Պայմանավորվող կողմին՝ ներկայացնելով նման լրացման կամ փոփոխության կամ նման միջոցի մասին մանրամասն տեղեկատվություն, և
- (b) մյուս Պայմանավորվող կողմի խնդրանքով՝ մյուս Պայմանավորվող կողմի հետ բարեխղճորեն անցկացնում է խորհրդակցություններ փոխադարձ համոզվածություն ապահովելու նպատակով:

5. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհրաժեշտության դեպքում նախաձեռնում է, համապատասխանաբար, I և II հավելվածների՝ իր համար նախատեսված առդիրներում նշված՝ չհամապատասխանող միջոցները նվազեցնել կամ վերացնել:

6. 2-րդ և 3-րդ հոդվածները չեն կիրառվում որևէ միջոցի նկատմամբ, որը բխում է ՄՄԻԱԱ համաձայնագրի 3-րդ և 4-րդ հոդվածներով սահմանված պարտավորությունների բացառություններից կամ նվազումից, ինչը, մասնավորապես, սահմանված է ՄՄԻԱԱ համաձայնագրի 3-5-րդ հոդվածներում:

7. 2-րդ, 3-րդ և 6-րդ հոդվածները չեն կիրառվում որևէ միջոցի նկատմամբ, որը Պայմանավորվող կողմն ընդունում կամ իրականացնում է պետական գնումների առնչությամբ:

## **Հոդված 8 Թափանցիկությունը**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ անհապաղ հրապարակում կամ որևէ այլ կերպով հանրությանը հասանելի է դարձնում իր օրենքները, կանոնակարգերը, վարչական ընթացակարգերը, վարչական գործերով որոշումներն ու դատարանի ընդհանուր կիրառության որոշումները, ինչպես նաև միջազգային համաձայնագրերը, որոնք առնչվում կամ ազդում են սույն Համաձայնագրի կիրառմանն գործողության վրա:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի խնդրանքով, անհապաղ պատասխանում է կոնկրետ հարցերին և այդ մյուս Պայմանավորվող կողմին տրամադրում է 1-ին կետում նշված հարցերին վերաբերող տեղեկատվություն:

3. 1-ին և 2-րդ կետերը չեն մեկնաբանվում այնպես, որ Պայմանավորվող կողմերից որևէ մեկը պարտավորվի հայտնելու այնպիսի գաղտնի տեղեկություն, որի հրապարակումը կխոչընդոտի օրենքի կատարմանը կամ որևէ այլ կերպով կհակասի հանրային շահին, կամ որը կարող է սահմանափակել գաղտնիությունը կամ օրինական առևտրային շահերը:

## **Հոդված 9 Հանրային մեկնաբանությունների վերաբերյալ ընթացակարգերը**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, իր օրենքներին և կանոնակարգերին համապատասխան, ձգտում է ապահովել հանրության կողմից մեկնաբանությունների պատշաճ հնարավորություն սույն Համաձայնագրով կարգավորվող որևէ հարցի վրա ազդեցություն ունեցող՝ ընդհանուր կիրառության կանոնակարգերի ընդունումից, փոփոխությունից կամ դրանք ուժը կորցրած ճանաչելուց առաջ, բացառությամբ արտակարգ իրավիճակների կամ բացառապես փոքր բնույթի դեպքերի:

## **Հոդված 10**

## Կոռուպցիայի դեմ պայքարի միջոցները

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, իր օրենքներին ու կանոնակարգերին համապատասխան, ապահովում է, որ միջոցառումներ և ջանքեր գործադրվեն սույն Համաձայնագրով կարգավորվող հարցերի շրջանակներում կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի ուղղությամբ:

### Հոդված 11

#### Ներդրողների մուտքը, կացությունը և բնակությունը

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, իր օրենքներին և կանոնակարգերին համապատասխան, բարյացակամորեն քննարկում է մյուս Պայմանավորվող կողմի քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձի և մյուս Պայմանավորվող կողմի ձեռնարկությունում աշխատող անձնակազմի և գործադիր ղեկավարի, կառավարչի և տնօրենների խորհրդի անդամի մուտքի, կացության և բնակության համար դիմումները, ովքեր ցանկանում են մուտք գործել առաջին Պայմանավորվող կողմի տարածք և ներդրումային գործունեություն իրականացնելու նպատակով մնալ այնտեղ:

### Հոդված 12

#### Օտարումը և փոխհատուցումը

1. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը չի կարող օտարել կամ ազգայնացնել մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի՝ իր տարածքում գտնվող ներդրումները կամ ձեռնարկել ցանկացած միջոց, որ համարժեք է օտարմանը կամ ազգայնացմանը (այսուհետև՝ օտարում), բացառությամբ՝

(a) հանրային նպատակներով.

(b) առանց խտրականության.

(c) վճարի հիման վրա՝

(i) Ճապոնիայի դեպքում՝ օտարումից անմիջապես հետո՝ 2-5-րդ կետերին համապատասխան համարժեք ու արդյունավետ փոխհատուցմամբ, և

(ii) Հայաստանի Հանրապետության դեպքում՝ նախքան օտարումը՝ 2-5-րդ կետերին համապատասխան՝ համարժեք ու արդյունավետ փոխհատուցմամբ, և

(d) համաձայն պատշաճ իրավական ընթացակարգի:

2. Փոխհատուցումը պետք է համարժեք լինի օտարված ներդրումների՝ օտարման մասին հանրորեն հայտարարվելու պահի դրությամբ կամ օտարումը կատարելու պահին

գործող իրական շուկայական արժեքին՝ կախված, թե որն է ավելի վաղ տեղի ունեցել: Իրական շուկայական արժեքը չպետք է արտացոլի արժեքի որևէ փոփոխություն՝ կապված այն հանգամանքի հետ, որ օտարումն ավելի վաղ է հանրորեն հայտնի դարձել:

3. Փոխհատուցումը պետք է վճարվի առանց հետաձգման, ներառի առևտրային ողջամիտ դրույքով տոկոս՝ հաշվարկված օտարման ամսաթվից մինչև վճարման ամսաթիվը, և պետք է լինի արդյունավետորեն իրացվելի ու ազատ փոխանցելի:

4. Եթե վճարումը կատարվում է ազատ փոխարկելի արժույթով, վճարվող փոխհատուցումը պետք է ներառի առևտրային ողջամիտ դրույքով տոկոս այդ արժույթի համար՝ հաշվարկված օտարման ամսաթվից մինչև վճարման ամսաթիվը:

5. Եթե Պայմանավորվող կողմն ընտրում է ազատ փոխարկելի արժույթից տարբեր արժույթով վճարելու տարբերակը, ապա վճարվող փոխհատուցումը, որը փոխարկվում է վճարման արժույթի՝ վճարման ամսաթվի դրությամբ գործող շուկայական փոխարժեքով, չպետք է պակաս լինի, քան հետևյալների գումարը.

- (a) օտարման ամսաթվի դրությամբ արդար շուկայական արժեքը, որը փոխարկվում է ազատ փոխարկելի արժույթի՝ տվյալ ամսաթվի դրությամբ գործող շուկայական փոխարժեքով, և
- (b) այդ ազատ փոխարկելի արժույթի համար առևտրային ողջամիտ դրույքով տոկոս՝ հաշվարկված օտարման ամսաթվից մինչև վճարման ամսաթիվը:

6. Սույն հոդվածը չի կիրառվում մտավոր սեփականության իրավունքների հետ կապված պարտադիր լիցենզիաների՝ ՄՍԻԱԱ համաձայնագրին համապատասխան տրամադրման կամ մտավոր սեփականության իրավունքների դադարման, սահմանափակման կամ ծագման նկատմամբ՝ այնքանով, որքանով նման տրամադրումը, դադարումը, սահմանափակումը կամ ծագումը համահունչ են ՄՍԻԱԱ համաձայնագրին:

### **Հոդված 13** **Բախումներից պաշտպանությունը**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողներին, որոնք իրենց ներդրումների մասով կրել են կորուստ կամ վնաս առաջին Պայմանավորվող կողմի տարածքում՝ զինված ընդհարման կամ արտակարգ իրավիճակի հետևանքով, ինչպիսիք են՝ հեղափոխությունը, ապստամբությունը, քաղաքացիական անկարգությունը կամ առաջին Պայմանավորվող կողմի տարածքում ցանկացած այլ նմանատիպ իրադարձությունը, վերականգնման, հատուցման, փոխհատուցման կամ որևէ այլ լուծման մասով տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը տրամադրում է իր սեփական ներդրողներին կամ Պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի ներդրողներին՝ կախված, թե որն է առավել բարենպաստ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների համար:

2. Որպես լուծման միջոց՝ 1-ին կետում նշված ցանկացած վճարում պետք է լինի արդյունավետորեն իրացվելի, ազատ փոխանցելի և ազատ փոխարկելի՝ ազատ կիրառելի արժույթների շուկայական փոխարժեքով:

3. Պայմանավորվող կողմերից ոչ մեկը չպետք է շեղվի 1-ին կետով նախատեսված իր պարտավորությունների կատարումից 16-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն իրականացված միջոցների պատճառով:

#### **Հոդված 14** **Սուբրոգացիան**

Եթե մի Պայմանավորվող կողմը կամ նրա նշանակած գործակալությունը երաշխավորության, երաշխիքի կամ ապահովագրական պայմանագրի հիման վրա վճարում է կատարում այդ Պայմանավորվող կողմի ցանկացած ներդրողին՝ մյուս Պայմանավորվող կողմի տարածքում նման ներդրողի ներդրումների կապակցությամբ, վերջին Պայմանավորվող կողմը պետք է ճանաչի առաջին Պայմանավորվող կողմին կամ նրա նշանակած գործակալությանը նման ներդրողի որևէ իրավունքի կամ պահանջի փոխանցումը, որի հաշվին կատարվում է նման վճարում, և պետք է ճանաչի առաջին Պայմանավորվող կողմի կամ նրա նշանակած գործակալության իրավունքը՝ սուբրոգացիայի ուժով իրացնելու որևէ նման իրավունք կամ պահանջ՝ նույն ծավալով, ինչ ներդրողի սկզբնական իրավունքը կամ պահանջն են: Ինչ վերաբերում է իրավունքի կամ պահանջի նման փոխանցման և այդ վճարման փոխանցման ուժով այդ առաջին Պայմանավորվող կողմին կամ նրա նշանակած գործակալությանը կատարվելիք վճարմանը, 12-րդ, 13-րդ և 15-րդ հոդվածների դրույթները կիրառվում են համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*):

#### **Հոդված 15** **Փոխանցումները**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ երաշխավորում է, որ մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի՝ իր տարածքում ներդրման հետ կապված բոլոր փոխանցումները ազատորեն կկատարվեն դեպի իր տարածք և իր տարածքից դուրս՝ առանց հետաձգման: Այդ փոխանցումները մասնավորապես, սակայն ոչ բացառապես, ներառում են.

- (a) ներդրման պահպանման կամ ընդլայնման համար սկզբնական կապիտալը և լրացուցիչ գումարները.
- (b) շահույթները, տոկոսը, կապիտալի հավելածը, շահաբաժինները, ռոյալթիները, վճարները և ներդրումներից ստացվող այլ ընթացիկ եկամուտները.
- (c) պայմանագրից բխող վճարումները, ներառյալ ներդրումների հետ կապված փոխառության վճարումները.

- (d) ներդրումների ամբողջական կամ մասնակի վաճառքից կամ լուծարումից ստացվող միջոցները.
- (e) օտարերկրյա անձնակազմի աշխատավարձը և վարձատրությունները, որի աշխատանքը կապված է առաջին Պայմանավորվող կողմի տարածքում ներդրումների հետ.
- (f) 12-րդ և 13-րդ հոդվածների համաձայն կատարվող վճարումները, և
- (g) վեճի լուծումից բխող վճարումները:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է երաշխավորի, որ նման փոխանցումները կկատարվեն առանց հետաձգման, ազատ փոխարկելի արժույթներով՝ փոխանցման ամսաթվին գործող շուկայական փոխարժեքով:

3. Չհակասելով 1-ին և 2-րդ կետերին՝ Պայմանավորվող կողմը կարող է հետաձգել կամ կանխել փոխանցումը համարժեք, ոչ խտրական և բարեխիղճ ձևով կիրառելով իր օրենքներն ու կանոնակարգերը, որոնք առնչվում են՝

- (a) սնանկությանը, անվճարունակությանը կամ պարտատերերի իրավունքների պաշտպանությանը.
- (b) արժեթղթերի, ֆյուչերսների, օպցիոնների կամ ածանցյալ գործիքների թողարկմանը, առքուվաճառքին կամ դրանցով գործառնությունների կատարմանը.
- (c) քրեական կամ այլ իրավախախտումներին.
- (d) արժույթային կամ այլ դրամական գործիքների փոխանցման վերաբերյալ հաշվետվություններին կամ հաշիվների վարմանը, երբ անհրաժեշտ է աջակցել իրավապահ կամ ֆինանսական հարցեր կարգավորող մարմիններին, կամ
- (e) արբիտրաժային վարույթներով որոշումների կամ վճիռների կատարման ապահովմանը:

## **Հոդված 16**

### **Ընդհանուր բնույթի և անվտանգությանն առնչվող բացառությունները**

1. Ըստ այն պահանջի, որ նման միջոցները Պայմանավորվող կողմի կողմից չեն իրականացվում այնպիսի ձևով, ինչը կհամարվեր կամայական կամ անհիմն խտրականության միջոց կամ քողարկված սահմանափակում՝ կապված մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների և առաջին Պայմանավորվող կողմի տարածքում նրանց ներդրումների հետ, սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես խոչընդոտ առաջին Պայմանավորվող կողմի կողմից այնպիսի միջոցներ ընդունելու կամ իրականացնելու համար, որոնք.

- (a) անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության համար.
- (b) անհրաժեշտ են հասարակական բարոյականությունը պաշտպանելու կամ հասարակական կարգը պահպանելու համար՝ պայմանով, որ հասարակական կարգի պահպանությունից բացառություն կարող է կիրառվել միայն այն դեպքում, եթե հասարակության հիմնարար շահերից մեկը գտնվում է իրական և բավական լուրջ սպառնալիքի տակ.
- (c) անհրաժեշտ են ապահովելու համար համապատասխանությունը սույն օրենքներին կամ կանոնակարգերին, որոնք չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին, ներառյալ՝ նրանց, որոնք առնչվում են՝
  - (i) կեղծ և խարդախ գործելակերպի կանխարգելմանը կամ պայմանագիրը չկատարելու արդյունքում առաջացող հետևանքներին,
  - (ii) անհատի անձնական կյանքի պաշտպանությանը՝ կապված անձնական տվյալների մշակման ու տարածման և անձնական գործերի ու հաշիվների գաղտնիության պաշտպանության հետ, կամ
  - (iii) ապահովությանը, կամ
- (d) կիրառվել են գեղարվեստական, պատմական կամ հնագիտական արժեք ունեցող ազգային հարստության պաշտպանության համար:

2. Ըստ 13-րդ հոդվածի 3-րդ կետի՝ սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես խոչընդոտ Պայմանավորվող կողմի կողմից այնպիսի միջոցներ ընդունելու կամ իրականացնելու համար, որոնք.

- (a) նա համարում է անհրաժեշտ իր անվտանգության տեսանկյունից հիմնական օգուտները պաշտպանելու համար, որոնք՝
  - (i) իրականացվել են այդ Պայմանավորվող կողմում կամ միջազգային հարաբերություններում պատերազմի, զինված հակամարտության կամ այլ արտակարգ դրության ժամանակ, կամ
  - (ii) առնչվում են զենքի չտարածման ռեժիմը պահպանող ազգային քաղաքականության կամ միջազգային համաձայնագրերի իրականացմանը, կամ
- (b) ուղղված են Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված՝ միջազգային խաղաղության և անվտանգության պահպանմանն ուղղված իր պարտավորությունների իրագործմանը:

## **Հոդված 17**

### **Ժամանակավոր պաշտպանական միջոցները**

1. Պայմանավորվող կողմը կարող է ընդունել կամ իրականացնել սահմանափակող միջոցներ՝ կապված կապիտալի մասով միջսահմանային գործառնությունների, ինչպես նաև վճարումների կամ փոխանցումների՝ ներառյալ ներդրումներին առնչվող գործառնությունների համար 15-րդ հոդվածում նշված փոխանցումների հետ՝

- (a) վճարային հաշվեկշռի հետ կապված և արտաքին ֆինանսական լուրջ դժվարությունների կամ այդպիսի վտանգի դեպքում, կամ
- (b) այն բացառիկ դեպքերում, երբ կապիտալի շարժն առաջացնում է կամ սպառնում է առաջացնել լուրջ դժվարություններ մակրոտնտեսական կառավարման համար, մասնավորապես՝ դրամական և արտարժույթային քաղաքականությունների առումով:

2. 1-ին կետում նշված սահմանափակող միջոցները պետք է՝

- (a) կիրառվեն այնպես, որ մյուս Պայմանավորվող կողմն ունենա ոչ պակաս բարենպաստ պայմաններ, քան Պայմանավորվող կողմ չհանդիսացող որևէ կողմ.
- (b) համապատասխանեն Արժույթի միջազգային հիմնադրամի համաձայնագրի հոդվածներին.
- (c) չգերազանցեն միջոցները, որոնք անհրաժեշտ են 1-ին կետով նախատեսված հանգամանքների հետ գործ ունենալու համար.
- (d) լինեն ժամանակավոր և աստիճանաբար հանվեն 1-ին կետում նշված իրավիճակի զարգացմանը զուգահեռ.
- (e) անհապաղ փոխանցվեն մյուս Պայմանավորվող կողմին, և
- (f) անհարկի չվնասեն մյուս Պայմանավորվող կողմի առևտրային, տնտեսական և ֆինանսական շահերը:

3. 1-ին կետով նախատեսված ցանկացած միջոց ընդունած Պայմանավորվող կողմը, ըստ պահանջի, մյուս Պայմանավորվող կողմի հետ սկսում է խորհրդակցություններ՝ առաջին Պայմանավորվող կողմի ընդունած սահմանափակումները վերանայելու նպատակով:

## **Հոդված 18**

### **Պրուդենցիալ միջոցները**



1. Չհակասելով սույն Համաձայնագրի ցանկացած այլ դրույթին՝ Պայմանավորվող կողմը չպետք է ունենա խոչընդոտներ պրուլենցիալ նպատակներով ֆինանսական ծառայություններին առնչվող միջոցառումներ իրականացնելու, ներառյալ՝ ներդրողների, ավանդատուների, ապահովագրողների կամ այնպիսի այլ անձանց պաշտպանության համար միջոցառումները, որոնց նկատմամբ ֆինանսական ծառայություններ մատուցող ձեռնարկությունն ունի ֆիդուցիար պարտականություն, կամ իր ֆինանսական համակարգի ամբողջականությունն ու կայունությունն ապահովելու հետ կապված:

2. Այն դեպքերում, երբ Պայմանավորվող կողմի կողմից 1-ին կետի համաձայն ձեռնարկված միջոցները չեն համապատասխանում սույն Համաձայնագրին, դրանք չեն օգտագործվում որպես Պայմանավորվող կողմի՝ սույն Համաձայնագրով նախատեսված պարտավորություններից խուսափելու միջոց:

### **Հոդված 19**

#### **Մտավոր սեփականության իրավունքները**

1. Պայմանավորվող կողմերը պետք է տրամադրեն և ապահովեն մտավոր սեփականության իրավունքների համապատասխան և արդյունավետ պաշտպանություն և խթանեն արդյունավետությունն ու թափանցիկությունը մտավոր սեփականության պաշտպանության համակարգում: Այս նպատակով Պայմանավորվող կողմերն անհապաղ խորհրդակցում են միմյանց հետ՝ Պայմանավորվող կողմերից ցանկացածի պահանջով: Խորհրդակցությունների արդյունքներից կախված՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, իր օրենքների և կանոնակարգերի համաձայն, իրականացնում է պատշաճ միջոցներ այն գործոնները վերացնելու ուղղությամբ, որոնք ճանաչվել են որպես մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների ներդրումների վրա բացասական ազդեցություն ունեցող:

2. Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է ազդի Պայմանավորվող կողմերի՝ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության մասով այն բազմակողմանի համաձայնագրերով նախատեսված իրավունքների և պարտավորությունների վրա, որոնց կողմ են Պայմանավորվող կողմերը:

3. Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի այնպես, որ Պայմանավորվող կողմերից որևէ մեկի վրա պարտավորություն դրվի Պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի ներդրողների և նրանց ներդրումների վրա տարածելու մյուս Պայմանավորվող կողմի ներդրողների և նրանց ներդրումների նկատմամբ կիրառվող՝ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությանն առնչվող այն բազմակողմանի համաձայնագրերի ուժով տրամադրվող ռեժիմը, որոնց կողմ է առաջին Պայմանավորվող կողմը:

### **Հոդված 20**

#### **Հարկման հետ կապված միջոցները**

1. Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է ազդի Պայմանավորվող կողմերից որևէ մեկի՝ որևէ հարկային կոնվենցիայով նախատեսված իրավունքների և

պարտավորությունների վրա: Սույն Համաձայնագրի և որևէ նման կոնվենցիայի միջև որևէ հակասության առկայության դեպքում կիրառվում է այդ կոնվենցիան՝ հակասող դրույթների մասով:

2. 2-րդ, 3-րդ և 6-րդ հոդվածները չեն կիրառվում հարկման հետ կապված միջոցառումների նկատմամբ:

### **Հոդված 21**

#### **Առողջապահական, անվտանգության ու բնապահպանական միջոցները և աշխատանքային չափորոշիչները**

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ գիտակցում է, որ նպատակահարմար չէ մյուս Պայմանավորվող կողմի և Պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի ներդրողների ներդրումներն իր առողջապահական, անվտանգության և բնապահպանական միջոցները թուլացնելու կամ իր աշխատանքային չափորոշիչները նվազեցնելու միջոցով խրախուսելը: Այդ նպատակով յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ չպետք է հրաժարվի կամ այլ կերպով շեղվի այդ միջոցներից կամ չափորոշիչներից՝ որպես իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի և Պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի ներդրողների ներդրումների հաստատման, ձեռքբերման կամ ընդլայնման համար խրախուսում:

### **Հոդված 22**

#### **Օգուտների մերժումը**

1. Պայմանավորվող կողմը կարող է մերժել կիրառել սույն Համաձայնագրով նախատեսված արտոնությունները մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի համար, որը այդ մյուս Պայմանավորվող կողմի ձեռնարկությունն է, և վերջինիս կողմից կատարված ներդրումների նկատմամբ, եթե այդ ձեռնարկությունը Պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի ներդրողի սեփականությունն է կամ վերահսկվում է նրա կողմից, և մերժող Պայմանավորվող կողմը՝

- (a) Պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի հետ դիվանագիտական հարաբերություններ չունի, կամ
- (b) ընդունում կամ պահպանում է այնպիսի միջոցներ Պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի նկատմամբ, որոնք արգելում են գործարքները ձեռնարկության հետ, կամ որոնք կհամարվեին խախտված կամ շրջանցված, եթե սույն Համաձայնագրի արտոնությունները տրամադրվեին այդ ձեռնարկությանը կամ դրա ներդրումներին:

2. Պայմանավորվող կողմը կարող է մերժել սույն Համաձայնագրով նախատեսված արտոնությունների կիրառումը մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի նկատմամբ, որը այդ մյուս Պայմանավորվող կողմի ձեռնարկություն է, և նրա ներդրումների նկատմամբ, եթե այդ ձեռնարկությունը Պայմանավորվող կողմ չհանդիսացող կողմի կամ մերժող Պայմանավորվող կողմի ներդրողի սեփականությունն

է կամ վերահսկվում է նրա կողմից, և ձեռնարկությունը չի իրականացնում կարևոր բիզնես գործունեություն մյուս Պայմանավորվող կողմի տարածքում:

3. Սույն հոդվածի նպատակով ձեռնարկությունը՝

- (a) ներդրողի «սեփականությունն» է, եթե նրա բաժնային մասնակցության ավելի քան 50%-ը շահավետորեն պատկանում է ներդրողին, և
- (b) «վերահսկվում» է ներդրողի կողմից, եթե ներդրողն իրավասու է նշանակելու նրա տնօրենների մեծ մասին կամ այլ ձևով օրինականորեն կառավարելու նրա գործողությունները:

## **ԳԼՈՒԽ II ՎԵՃԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

### **Հոդված 23 Վեճի կարգավորումը Պայմանավորվող կողմերի միջև**

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ բարյացակամորեն քննարկում և համարժեք հնարավորություն է ապահովում այնպիսի հայտարարությունների հետ կապված խորհրդակցությունների համար, որոնք մյուս Պայմանավորվող կողմը կարող է անել սույն Համաձայնագիրն իրականացնելու վրա ազդող ցանկացած հարցի հետ կապված:

2. Սույն Համաձայնագիրը մեկնաբանելու և կիրառելու հետ կապված՝ Պայմանավորվող կողմերի միջև ցանկացած վեճ, որը պատշաճ կերպով չի կարգավորվել դիվանագիտական ուղիներով, որոշման համար ուղղվում է արբիտրաժային խորհրդին: Նման արբիտրաժային խորհուրդը ստեղծվում է յուրաքանչյուր վեճի համար՝ հետևյալ կերպով: Վեճը մյուս Պայմանավորվող կողմից արբիտրաժային քննության հանձնելու մասին ծանուցումը Պայմանավորվող կողմերից ցանկացածի կողմից ստանալու օրվանից հետո՝ վաթսուն օրվա ընթացքում, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ նշանակում է մեկ արբիտր: Երկու արբիտրներն ընտրում են երրորդ արբիտրին, որը, երկու Պայմանավորվող կողմերի համաձայնությամբ, նշանակվում է նախագահ՝ պայմանով, որ երրորդ արբիտրը չպետք է լինի Պայմանավորվող կողմերից որևէ մեկի քաղաքացի: Նախագահը նշանակվում է մյուս երկու արբիտրների նշանակման օրվանից հետո՝ վաթսուն օրվա ընթացքում:

3. Եթե 2-րդ կետում նշված անհրաժեշտ նշանակումները չեն կատարվել այդ կետում նշված ժամկետներում, Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել Հաագայի Մշտական արբիտրաժային դատարանի գլխավոր քարտուղարին՝ կատարելու համար նման նշանակումները, եթե այլ համաձայնություն ձեռք չի բերվել:

4. Արբիտրաժային խորհուրդը Պայմանավորվող կողմերի հետ խորհրդակցելուց հետո սահմանում է իր սեփական ընթացակարգային կանոնները: Արբիտրաժային խորհուրդը վեճի վերաբերյալ որոշում է կայացնում սույն Համաձայնագրին և

միջազգային իրավունքի՝ խնդրո առարկայի նկատմամբ գործող կանոններին և սկզբունքներին համապատասխան: Արբիտրաժային խորհուրդը ողջամիտ ժամկետում պետք է կայացնի իր որոշումը՝ ձայների մեծամասնությամբ: Նման որոշումը վերջնական է և պարտադիր:

5. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կրում է իր ընտրած արբիտրի և արբիտրաժային վարույթում իր ներկայացուցչության հետ կապված ծախսերը: Արբիտրաժային խորհրդի նախագահի՝ իր պարտականությունները կատարելու հետ կապված ծախսերը և արբիտրաժային խորհրդի մնացած ծախսերը կրում են Պայմանավորվող կողմերը՝ հավասարապես:

## **Հոդված 24**

### **Ներդրումային վեճերի կարգավորումը Պայմանավորվող կողմի և մյուս Պայմանավորվող կողմի ներդրողի միջև**

1. Հայցվորի և պատասխանողի միջև ներդրումային վեճերի առկայության դեպքում նրանք նախ պետք է փորձեն վեճը լուծել խորհրդակցության և բանակցության միջոցով, ինչը կարող է ներառել ոչ պարտադիր բնույթ ունեցող, երրորդ կողմի մասնակցությամբ ընթացակարգեր:

2. Այն դեպքում, երբ վեճի կողմը համարում է, որ ներդրումային վեճը չի կարող լուծվել խորհրդակցության և բանակցության միջոցով՝

(a) հայցվորն իր անունից կարող է արբիտրաժին ներկայացնել սույն հոդվածով նախատեսված հայց առ այն, որ՝

(i) պատասխանողը խախտել է՝

(A) I գլխով նախատեսված որևէ պարտավորություն, կամ

(B) ներդրումային համաձայնագիրը, որի կողմ է հայցվորը, և

(ii) հայցվորը կրել է այդ խախտման պատճառով կամ դրանից առաջացող կորուստ կամ վնաս, և

(b) հայցվորն իր սեփականություն հանդիսացող կամ իր կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվող իրավաբանական անձ հանդիսացող պատասխանողի ձեռնարկության անունից կարող է սույն հոդվածով արբիտրաժային քննության ներկայացնել հայց առ այն, որ՝

(i) պատասխանողը խախտել է՝

(A) I գլխով նախատեսված պարտավորություն կամ

(B) ներդրումային համաձայնագիրը, որի կողմ է ձեռնարկությունը, և

- (ii) ձեռնարկությունը կրել է այդ խախտման պատճառով կամ դրանից առաջացող կորուստ կամ վնաս:

3. Ցանկացած հայց սույն հոդվածով նախատեսված արբիտրաժային քննության ներկայացնելուց առնվազն իննսուն օր առաջ հայցվորը պատասխանողին փոխանցում է հայցը արբիտրաժային քննության ներկայացնելու իր մտադրության մասին գրավոր ծանուցում (այսուհետև՝ մտադրության մասին ծանուցում): Մտադրության մասին ծանուցման մեջ նշվում են՝

- (a) հայցվորի անունն ու հասցեն, իսկ 2-րդ կետի (b) ենթակետի դեպքում՝ ձեռնարկության անունը, հասցեն և հիմնադրման վայրը.
- (b) յուրաքանչյուր հայցի համար՝ I գլխի կամ ներդրումային համաձայնագրի ենթադրյալ խախտված դրույթը և ցանկացած այլ վերաբերելի դրույթ.
- (c) յուրաքանչյուր հայցի համար իրավական և փաստական հիմքը և
- (d) հայցի ապահովման ցանկալի միջոցը և պատճառված վնասների գումարի մոտավոր չափը:

4. Եթե հայց ներկայացնելու համար հիմք հանդիսացած դեպքերից անցել է վեց ամիս, հայցվորը կարող է արբիտրաժային քննության ներկայացնել 2-րդ կետում նշված հայցը՝

- (a) ՆՎԿՄԿ կոնվենցիայի համաձայն՝ պայմանով, որ երկու Պայմանավորվող կողմերն էլ ՆՎԿՄԿ կոնվենցիայի կողմեր են.
- (b) ՆՎԿՄԿ լրացուցիչ միջոցի վերաբերյալ կանոնների համաձայն՝ պայմանով, որ Պայմանավորվող կողմերից որևէ մեկը, սակայն ոչ երկուսը, ՆՎԿՄԿ կոնվենցիայի կողմ է.
- (c) ՄԱԿՄԱԻՀ արբիտրաժային կանոնների համաձայն, կամ
- (d) վեճի կողմերի համաձայնության դեպքում՝ ցանկացած այլ արբիտրաժային հաստատության կամ արբիտրաժային կանոնների համաձայն:

5. Հայցը համարվում է սույն հոդվածի համաձայն արբիտրաժային քննության ներկայացված, եթե արբիտրաժի մասին հայցվորի ծանուցումը կամ պահանջը (այսուհետև՝ սույն հոդվածում՝ արբիտրաժի մասին ծանուցում)՝

- (a) որը նախատեսված է ՆՎԿՄԿ կոնվենցիայի 36-րդ հոդվածի 1-ին կետով, ստացվել է ՆՎԿՄԿ գլխավոր քարտուղարի կողմից.
- (b) որը նախատեսված է ՆՎԿՄԿ լրացուցիչ միջոցի վերաբերյալ կանոնների «C» առդիրի 2-րդ հոդվածով, ստացվել է ՆՎԿՄԿ գլխավոր քարտուղարի կողմից.

- (c) որը նախատեսված է ՄԱԿՄԱԻՀ արբիտրաժային կանոնների 3-րդ հոդվածով, ՄԱԿՄԱԻՀ արբիտրաժային կանոնների 20-րդ հոդվածով նախատեսված հայցադիմումի հետ միասին ստացվել է պատասխանողի կողմից:
- (d) որը ներկայացվել է 4-րդ կետի (d) ենթակետի համաձայն ընտրված ցանկացած այլ արբիտրաժային հաստատության կամ արբիտրաժային կանոնների համաձայն, ստացվել է պատասխանողի կողմից, եթե այդ հաստատության կողմից կամ այդ կանոններով այլ բան սահմանված չէ:

6. Սույնով յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ համաձայնում է հայցը սույն հոդվածով նախատեսված արբիտրաժային քննության ներկայացնել սույն Համաձայնագրին համապատասխան: 2(a)(i)(B) ենթակետին կամ 2(b)(i)(B) ենթակետին համաձայն ներկայացված հայցի դեպքում, եթե ներդրումային համաձայնագիրը նախատեսում է դրույթ, որը ենթադրում է ֆորում ներդրումային վեճի կարգավորման համար, նման դրույթը չի կարող մեկնաբանվել որպես հրաժարում կամ նման համաձայնության բացառում ներդրումային համաձայնագրի խախտում ենթադրող հայցի նկատմամբ:

7. Չհակասելով 6-րդ կետին՝ հայց չի կարող ներկայացվել սույն հոդվածով նախատեսված արբիտրաժային քննության, եթե անցել է ավելի քան երեք տարի այն ամսաթվից, երբ հայցվորն առաջին անգամ ձեռք է բերել կամ պետք է ձեռք բերեր տեղեկություն 2-րդ կետով նախատեսված ենթադրյալ խախտման մասին, և երբ տեղեկացվել է, որ հայցվորը՝ 2(a) ենթակետի դեպքում, կամ 2(b) ենթակետով նախատեսված ձեռնարկությունը՝ այդ ենթակետով նախատեսված դեպքում, կրել է կորուստ կամ վնաս:

8. Հայցը սույն հոդվածի համաձայն արբիտրաժային քննության չի կարող ներկայացվել, եթե՝

(a) 2(a) ենթակետի դեպքում՝

- (i) հայցվորը տալիս է գրավոր համաձայնություն արբիտրաժային քննությանը՝ սույն հոդվածում սահմանված ընթացակարգերին համապատասխան, և
- (ii) հայցվորը գրավոր հրաժարվում է Պայմանավորվող կողմերից ցանկացածի օրենքի կամ վեճերի կարգավորման այլ ընթացակարգերի համաձայն ցանկացած դատարանի առաջ ենթադրաբար 2(a)(i) ենթակետով նախատեսված խախտում կազմող ցանկացած միջոցի մասով վարույթ հարուցելու կամ շարունակելու իրավունքից, և

(b) 2(b) ենթակետի դեպքում՝

- (i) և՛ հայցվորը, և՛ այդ ենթակետում նշված ձեռնարկությունը գրավոր

համաձայնում են արբիտրաժային քննության վերաբերյալ՝ սույն հոդվածում սահմանված ընթացակարգերի համաձայն, և

- (ii) և՛ հայցվորը, և՛ այդ ենթակետում նշված ձեռնարկությունը գրավոր հրաժարվում են Պայմանավորվող կողմերից ցանկացածի օրենքի կամ վեճերի կարգավորման այլ ընթացակարգերի համաձայն ցանկացած դատարանի առաջ ենթադրաբար 2(b)(i) ենթակետով նախատեսված խախտում կազմող ցանկացած միջոցի մասով վարույթ հարուցելու կամ շարունակելու իրավունքից:

9. 8(a)(ii) կամ 8(b)(ii) ենթակետերի համաձայն ներկայացված հրաժարումը դադարում է կիրառվել, եթե արբիտրաժային տրիբունալը մերժում է հայցը՝ 3-րդ, 4-րդ, 7-րդ կամ 8-րդ կետերի պահանջները չկատարելու հիման վրա կամ ցանկացած այլ ընթացակարգային կամ իրավագորության հիմքով:

10. Չհակասելով 8(a)(ii) և 8(b)(ii) ենթակետերին՝ հայցվորը կամ 2(b) ենթակետում նշված ձեռնարկությունը կարող է, պատասխանողի օրենքի համաձայն, դատարանի առաջ ձեռնարկել կամ շարունակել նյութական վնասի վճարում չներառող միջանկյալ դատական պաշտպանության միջոց ստանալուն ուղղված գործողություն:

11. (a) Այն դեպքում, երբ հայցը ներկայացվել է 2(a)(i)(A) կամ 2(b)(i)(A) կետի համաձայն, տրիբունալը որոշում է վեճի առարկայի վերաբերյալ՝ սույն Համաձայնագրի և միջազգային իրավունքի գործող կանոններին համապատասխան:

(b) Այն դեպքում, երբ հայցը ներկայացվել է 2(a)(i)(B) կամ 2(b)(i)(B) կետի համաձայն, տրիբունալը կիրառում է՝

(i) համապատասխան ներդրումային համաձայնագրում նշված օրենքի կանոնները կամ վեճի կողմերի միջև այլ համաձայնությունը, կամ

(ii) եթե չեն սահմանվել օրենքի կանոնները, կամ այլ համաձայնություն ձեռք չի բերվել, ապա՝ պատասխանողի օրենքը, ներառյալ իր՝ հակասող օրենքների վերաբերյալ կանոնները:

12. Պատասխանողը վեճի կողմ չհանդիսացող Կողմին ուղարկում է՝

(a) արբիտրաժի մասին ծանուցում՝ ոչ ուշ, քան հայցը ներկայացնելու օրվանից երեսուն օր հետո, և

(b) արբիտրաժին ներկայացված բոլոր միջնորդությունների պատճենները:

13. Վեճի կողմ չհանդիսացող կողմը վեճի կողմերին ուղղված գրավոր ծանուցմամբ կարող է արբիտրաժային տրիբունալին ներկայացնել դիմումներ սույն Համաձայնագրի մեկնաբանվող հարցի վերաբերյալ:

14. Սույն հոդվածով նախատեսված արբիտրաժում պատասխանողը չի կարող պաշտպանության, հակընդդեմ հայցի, հաշվանցման իրավունքի շրջանակներում կամ որևէ այլ ձևով պնդել, որ հայցվորը, ապահովագրական կամ երաշխիքի պայմանագրի համաձայն, ստացել է կամ պետք է ստանա իր՝ ենթադրաբար կրած վնասների ամբողջական կամ մասնակի հատուցում կամ այլ փոխհատուցում:

15. Արբիտրաժային տրիբունալը կարող է որոշում կայացնել միայն՝

(a) այն մասին, թե արդյոք պատասխանողի կողմից եղել է I գլխով կամ 2(a)(i)(B) կամ 2(b)(i)(B) ենթակետում նշված ներդրումային համաձայնագրով նախատեսված որևէ պարտավորության խախտում՝ կապված հայցվորի և իր ներդրումների հետ, և

(b) հետևյալ միջոցներից մեկի կամ երկուսի մասին, միայն եթե տեղի է ունեցել նման խախտում՝

(i) նյութական վնասի փոխհատուցում և կիրառվող տոկոս, և

(ii) գույքի վերադարձ, որի դեպքում որոշմամբ պետք է նախատեսվի, որ գույքը վերադարձնելու փոխարեն պատասխանողը կարող է վճարել նյութական վնասի փոխհատուցում և ցանկացած կիրառվող տոկոս:

Արբիտրաժային տրիբունալը կարող է նաև որոշում կայացնել ծախսերի և փաստաբանի վճարների մասով՝ կիրառվող արբիտրաժային կանոններին համապատասխան:

16. 15-րդ կետի համաձայն՝ 2(b) ենթակետի դեպքում՝

(a) նյութական վնասի փոխհատուցումը և ցանկացած կիրառվող տոկոսը տրամադրելու մասին որոշումը պետք է ապահովի, որ այդ գումարը վճարվի այդ ենթակետում նշված ձեռնարկությանը.

(b) գույքը վերադարձնելու մասին որոշումը պետք է ապահովի վերադարձ այդ ենթակետում նշված ձեռնարկությանը, և

(c) որոշումը պետք է ապահովի, որ դա կկատարվի առանց որևէ ֆիզիկական անձի կամ ձեռնարկության՝ գործող օրենքով նախատեսված որևէ իրավունք սահմանափակելու:

17. Պատասխանողը կարող է ժամանակին հասանելի դարձնել հասարակությանը բոլոր այն փաստաթղթերը, ներառյալ 4-րդ կետի համաձայն ստեղծված արբիտրաժային տրիբունալին ներկայացված կամ վերջինիս կողմից կայացված որոշումը, որոնք ենթակա են խմբագրման՝



- (a) գաղտնի բիզնես տեղեկատվության մասով.
- (b) գաղտնի տեղեկատվության կամ Պայմանավորվող կողմերից մեկի օրենքների և կանոնակարգերի համաձայն՝ բացահայտվելուց այլ կերպաչափապահված տեղեկատվության մասով, և
- (c) այն տեղեկատվության մասով, որը, համաձայն համապատասխան արբիտրաժային կանոնների, չպետք է հրապարակվի:

18. Եթե վեճի կողմերի միջև այլ համաձայնություն ձեռք չի բերվել, արբիտրաժի վայրը պետք է լինի Նյու Յորքի կոնվենցիայի կողմ հանդիսացող երկիրը:

19. Արբիտրաժային տրիբունալի կողմից կայացված որոշումը վերջնական է և պարտադիր վեճի կողմ հանդիսացող Պայմանավորվող կողմերի համար: Սույն որոշումը ենթակա է կատարման այն երկրում, որտեղ ուժի մեջ մտած որոշման կատարման մասով պահանջվում է նման կատարում՝ գործող օրենքների և կանոնակարգերի, ինչպես նաև համապատասխան միջազգային իրավունքի՝ ներառյալ ՆՎԿՄԿ կոնվենցիայի և Նյու Յորքի կոնվենցիայի համաձայն:

### **Հոդված 25 Փաստաթղթերի հանձնումը**

1. Սույն գլխով նախատեսված արբիտրաժին առնչվող ծանուցումները և մյուս փաստաթղթերը փոխանցվում են Պայմանավորվող կողմին՝ ուղարկելով.

- (a) Ճապոնիայի համար՝ Արտաքին գործերի նախարարության տնտեսական հարցերի բյուրո, և
- (b) Հայաստանի Հանրապետության համար՝ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն:

2. Պայմանավորվող կողմը պետք է հանրության համար անմիջապես մատչելի դարձնի և ծանուցի մյուս Պայմանավորվող կողմին 1-ին կետում նշված մարմնի անվան ցանկացած փոփոխության մասին:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ հանրության համար հասանելի է դարձնում 1-ին և 2-րդ կետերում նշված իր մարմնի հասցեն:

### **ԳԼՈՒԽ III ՀԱՄԱՏԵՂ ԿՈՄԻՏԵՆ**

#### **Հոդված 26 Համատեղ կոմիտեն**

1. Սույն Համաձայնագրի նպատակների իրագործման նպատակով

Պայմանավորվող կողմերը, ցանկացած Պայմանավորվող կողմի խնդրանքով, ստեղծում են Համատեղ կոմիտե (այսուհետև՝ Կոմիտե): Կոմիտեի գործառույթներն են՝

- (a) քննարկել և վերանայել սույն Համաձայնագրի կիրարկումը և գործողությունը.
- (b) վերանայել 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն պահպանվող, փոփոխվող չհամապատասխանող միջոցները՝ նման չհամապատասխանող միջոցառումների կրճատմանը կամ վերացմանը նպաստելու նպատակով.
- (c) քննարկել 7-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ընդունված կամ իրականացված չհամապատասխանող միջոցները՝ Պայմանավորվող կողմերի ներդրողների համար բարենպաստ պայմանների խրախուսման նպատակով.
- (d) փոխանակել տեղեկատվություն սույն Համաձայնագրի շրջանակների վերաբերյալ և քննարկել Համաձայնագրի շրջանակներում ներդրումային միջավայրի բարելավմանն առնչվող ներդրումների հետ կապված հարցեր, և
- (e) քննարկել ներդրումներին առնչվող ցանկացած այլ հարց սույն Համաձայնագրի վերաբերյալ:

2. Կոմիտեն անհրաժեշտության դեպքում Պայմանավորվող կողմերին ընդհանուր համաձայնությամբ կարող է ներկայացնել համապատասխան առաջարկություններ սույն Համաձայնագրի նպատակների ավելի արդյունավետ գործողության կամ իրագործման համար:

3. Կոմիտեն կազմված է Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչներից: Կոմիտեն, Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ, կարող է հրավիրել Պայմանավորվող կողմերի կառավարությունների անդամներ չհանդիսացող՝ համապատասխան մարմինների ներկայացուցիչների, որոնք ունեն քննարկվող հարցերի հետ կապված անհրաժեշտ փորձ, և ունենալ համատեղ հանդիպումներ մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ:

4. Կոմիտեն իր գործառույթներն իրականացնելու համար սահմանում է իր սեփական ընթացակարգային կանոնները:

5. Կոմիտեն կարող է ստեղծել ենթակոմիտեներ և այդ ենթակոմիտեներին պատվիրակել հատուկ առաջադրանքներ:

6. Կոմիտեն հանդիպում է Պայմանավորվող կողմերից ցանկացածի պահանջով:

## **ԳԼՈՒԽ IV ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 27  
Վերնագրերը**

Սույն Համաձայնագրի գլուխների և հոդվածների վերնագրերը գրված են միայն դրանց հղում կատարելը դիտարկելու դարձնելու համար և չպետք է ազդեն սույն Համաձայնագրի մեկնաբանման վրա:

## **Հոդված 28 Փոփոխությունները**

Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել, և փոփոխություններն ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի 29-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով:

## **Հոդված 29 Եզրափակիչ դրույթներ**

1. Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցում են սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ իրենց համապատասխան ներպետական ընթացակարգերի ավարտի մասին: Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի ծանուցումներն ստանալու ամսաթվերից վերջինից հետո՝ երեսուներորդ օրը: Այն կգործի ուժի մեջ մտնելուց հետո տասը տարվա ընթացքում և կշարունակի գործել մինչև 2-րդ կետում սահմանված կարգով դադարեցնելը:

2. Պայմանավորվող կողմը, մյուս Պայմանավորվող կողմին մեկ տարի առաջ նախապես գրավոր ծանուցելով, կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը առաջին տասը տարի ժամկետի վերջում կամ դրանից հետո՝ ցանկացած ժամանակ:

3. Սույն Համաձայնագիրը կիրառվում է նաև Պայմանավորվող կողմերից ցանկացածի ներդրողների կողմից սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց առաջ կատարված բոլոր ներդրումների նկատմամբ, որոնք կատարվել են մյուս Պայմանավորվող կողմի տարածքում այդ մյուս Պայմանավորվող կողմի օրենքներին և կանոնակարգերին համապատասխան:

4. Այն ներդրումների նկատմամբ, որոնք կատարվել են մինչև սույն Համաձայնագրի գործողության դադարեցման օրը, սույն Համաձայնագրի դրույթները կգործեն սույն Համաձայնագրի գործողության դադարեցումից հետո՝ տասը տարի:

5. Սույն Համաձայնագիրը չի կիրառվում ուժի մեջ մտնելուց առաջ տեղի ունեցած դեպքերի առնչությամբ ներկայացված հայցերի նկատմամբ:

6. Սույն Համաձայնագրի հավելվածները կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Ի վկայումն վերոգրյալի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Երևան քաղաքում 2018 թվականի փետրվարի 14-ին, երկու  
բնօրինակով, անգլերենով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՂՄԻՑ՝**

**ՃԱՊՈՆԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ՝**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2018թ. փետրվարի 14-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև ներդրումների ազատականացման, խրախուսման փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի անգլերեն տեքստի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն

## Հավելված I

### 7-րդ հոդվածի 1(a) ենթակետի մեջ նշված՝ գոյություն ունեցող չհամապատասխանող միջոցները

1. Պայմանավորվող կողմի համար նախատեսված առդիրում 7-րդ հոդվածի 1(a) ենթակետին համապատասխան ներկայացված են նրա գոյություն ունեցող այն միջոցները, որոնք ենթակա չեն հետևյալ հոդվածներով սահմանվող՝ որոշ կամ բոլոր պարտավորություններին.

- (a) 2-րդ հոդված,
- (b) 3-րդ հոդված կամ
- (c) 6-րդ հոդված:

2. Առդիրի յուրաքանչյուր գրառման մեջ ներկայացվում են հետևյալ տարրերը.

- (a) «Ոլորտ»՝ վերաբերում է այն ոլորտին, որի վերաբերյալ կատարվել է գրառումը,
- (b) «Ենթաոլորտ»՝ հղման առկայության դեպքում վերաբերում է այն կոնկրետ ենթաոլորտին, որի վերաբերյալ կատարվել է գրառումը,
- (c) «Տնտեսական գործունեության տեսակ»՝ հղման առկայության դեպքում և միայն թափանցիկություն ապահովելու նպատակով վերաբերում է չհամապատասխանող միջոցի շրջանակներում ներառված գործունեությանը՝ ազգային կամ միջազգային դասակարգման տնտեսական գործունեության տեսակների ծածկագրերին համապատասխան,
- (d) «Համապատասխան պարտավորություններ»՝ նկարագրում է 1-ին կետի մեջ նշված պարտավորությունները, որոնք, 7-րդ հոդվածի 1(a) ենթակետին համաձայն, չեն վերաբերում թվարկված միջոցին (միջոցներին),
- (e) «Միջոցներ»՝ սահմանում է այն օրենքները, կանոնակարգերը կամ այլ միջոցները, որոնց վերաբերյալ կատարվել է գրառումը: «Միջոցներ» տարրի կազմում ներկայացված միջոցը՝
  - (i) նշանակում է՝ միջոց փոփոխություններով, շարունակվող կամ վերականգնված՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվի դրությամբ, և
  - (ii) ներառում է որևէ երկրորդական միջոց, որն ընդունվել է կամ իրականացվել է տվյալ միջոցի հիման վրա և դրան համապատասխան, և
- (f) «Նկարագրություն»՝ սահմանում է չհամապատասխանող միջոցը կամ ապահովում է այն միջոցի ոչ պարտադիր ընդհանուր նկարագրությունը, որի վերաբերյալ կատարվել է գրառումը:

3. Գրառման մեկնաբանության մեջ հաշվի են առնվում գրառման բոլոր տարրերը: Գրառումը մեկնաբանվում է սույն Համաձայնագրի համապատասխան

դրույթների ներքո, որոնց վերաբերյալ կատարվել է գրառումը, և «Միջոցներ» տարրը գերակայում է մյուս բոլոր տարրերի նկատմամբ:

4. Սույն հավելվածի իմաստով՝ «ՃՏԳՏՍԴ» եզրույթը նշանակում է Ճապոնիայի տնտեսական գործունեության տեսակների ստանդարտ դասակարգիչ, որը սահմանվել է Ճապոնիայի ներքին գործերի և կապի նախարարության կողմից և վերանայվել է 2013 թվականի հոկտեմբերի 30-ին:

5. Սույն հավելվածի իմաստով «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ ՀԴ-011-2013» եզրույթը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ, որը սահմանվել է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից՝ 2013 թվականի սեպտեմբերի 19-ին:

## Հայաստանի Հանրապետության համար նախատեսված առդիի

1	Ոլորտ Ենթաոլորտ Տնտեսական գործունեության տեսակ Համապատասխան պարտավորություններ Միջոցներ	Բոլորը  Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)  ԱՀԿ համաձայնագրի համաձայն՝ ծառայությունների ոլորտում ստանձնած պարտավորությունների առդիի (ՍԱԳՀ-137, 2004թ. (I. Հորիզոնական սահմանափակումներ))
	Նկարագրություն	Սուբսիդավորման իրավունք ունեն միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան հիմնադրված իրավաբանական անձինք՝ անկախ այն հանգամանքից, թե ով է կապիտալի սեփականատերը:
2	Ոլորտ Ենթաոլորտ Տնտեսական գործունեության տեսակ Համապատասխան պարտավորություններ Միջոցներ	Բոլորը  Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)  Սահմանադրության փոփոխություններ (2015թ.), հոդված 60 Հողային օրենսգիրք ( ՀՕ-185, 2001թ.), հոդված 4
	Նկարագրություն	Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք չեն կարող օգտվել սեփականության իրավունքից և ունենալ հողի նկատմամբ սեփականության իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված



		դեպքերի:
3	Ոլորտ	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն
	Ենթաօլորտ	Օդային տրանսպորտի գործունեություն
	Տնտեսական գործունեության տեսակ	Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ (ՀԴ-011-2013) 51- Օդային տրանսպորտի գործունեություն
	Համապատասխան պարտավորություններ	Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)
	Միջոցներ	«Ավիացիայի մասին» օրենք (ՀՕ-81-Ն, 2007թ.), հոդված 43
	Նկարագրություն	Օդային տրանսպորտի թռիչքային անվտանգության նպատակով տեխնիկական կարգավորման լիազորված մարմինը տալիս է օդանավ շահագործողի վկայական՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած կարգով, բացառապես՝ (a) Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց, որոնց բաժնեմասերի առնվազն 51 տոկոսը պատկանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին և (կամ) Հայաստանի Հանրապետությունում ստեղծված և գրանցված իրավաբանական անձանց, և (b) Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորված մարմիններին: Հայաստանի Հանրապետության շահերից ելնելով՝ տեխնիկական կարգավորման համար լիազորված մարմինը կարող է վերոնշյալ պայմաններից անել բացառություններ, եթե կան հատուկ պատճառներ, և օդանավ շահագործողը բազավորվելու է Հայաստանի Հանրապետությունում:
4	Ոլորտ	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն
	Ենթաօլորտ	Օդային տրանսպորտի գործունեություն

	Տնտեսական գործունեության տեսակ	Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ (<Դ-011-2013) 51 - Օդային տրանսպորտի գործունեություն
	Համապատասխան պարտավորություններ	Կատարման պահանջների արգելք (6-րդ հոդված)
	Միջոցներ	«Ավիացիայի մասին» օրենք (<Օ-81-Ն, 2007թ.), հոդված 35
	Նկարագրություն	Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի անձնակազմերի անդամներ պետք է լինեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, եթե լիազորված մարմինը բացառության կարգով այլ որոշում չի կայացնում:
5	Ոլորտ	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ
	Ենթաոլորտ	Շահումով խաղերի կազմակերպման գործունեություն
	Տնտեսական գործունեության տեսակ	Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ (<Դ-011-2013) 92.00.3 - Վիճակախաղերի կազմակերպման գործունեություն
	Համապատասխան պարտավորություններ	Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)
	Միջոցներ	«Վիճակախաղերի մասին» օրենք, (<Օ-3-Ն, 2003թ.), հոդված 4
	Նկարագրություն	Միայն առևտրային կազմակերպությունները, որոնց հիմնադիրները Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են և/կամ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված՝ իրավաբանական անձինք, կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետությունում վիճակախաղերի կազմակերպման գործունեություն:
6	Ոլորտ	Բոլորը

Ենթադրուտ

Տնտեսական  
գործունեության տեսակ

Համապատասխան  
պարտավորություններ

Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)

Միջոցներ

Կառավարության 2011 թվականի N 1441-Ն  
որոշում, հավելված 2, կետ 3

Նկարագրություն

Հայաստանի Հանրապետությունում  
քարտեզագրությամբ, գեոդեզիայով,  
չափագրմամբ և հողերի կառավարմամբ կարող  
են զբաղվել միայն Հայաստանի  
Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր  
պետական լիազոր մարմնից ստացել են  
որակավորման վկայական:

7 Ոլորտ

Մասնագիտական, գիտական և տեխնիկական  
գործունեություն

Ենթադրուտ

Իրավաբանական գործունեություն

Տնտեսական  
գործունեության տեսակ

Տնտեսական գործունեության տեսակների  
դասակարգիչ ՀԴ-011-2013  
69.1 – Իրավաբանական գործունեություն

Համապատասխան  
պարտավորություններ

Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)

Միջոցներ

«Նոտարիատի մասին» օրենք, (ՀՕ-274, 2001թ.),  
հոդված 10

Նկարագրություն

Նոտարի պաշտոնում կարող են նշանակվել  
միայն Հայաստանի Հանրապետության  
քաղաքացիները:

8 Ոլորտ

Վարչարարական և օժանդակ գործունեություն

Ենթադրուտ

Անվտանգություն և հետաքննություններ

Տնտեսական  
գործունեության տեսակ

Տնտեսական գործունեության տեսակների  
դասակարգիչ ՀԴ-011-2013  
80.1 – Անվտանգության ապահովման

	մասնավոր գործունեություն
Համապատասխան պարտավորություններ	Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)
Միջոցներ	«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենք, (ՀՕ-6-Ն, 2012թ.), հոդված 12
Նկարագրություն	Թիկնապահի և պահնորդի կարգավիճակ ձեռք բերելու և թիկնապահական ու պահնորդական գործառույթներ իրականացնելու (այդ թվում՝ զենքի և հատուկ միջոցների օգտագործմամբ) իրավունք ունեն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:
9 Ոլորտ	Տեղեկատվություն և կապ
Ենթաօլորտ	Կինոյի արտադրություն, հեռուստատեսային ծրագրերի թողարկում, երաժշտական և այլ աուդիո ձայնագրություններ, հեռուստառադիոծրագրերի կազմում և հեռարձակում
Տնտեսական գործունեության տեսակ	Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ ՀԴ-011-2013 60 - Հեռուստառադիոծրագրերի կազմում և հեռարձակում
Համապատասխան պարտավորություններ	Ազգային ռեժիմ (2-րդ հոդված) Առավել բարենպաստության ռեժիմ (3-րդ հոդված)
Միջոցներ	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենք (ՀՕ-97, 2000թ.), հոդված 16 և 55.1
Նկարագրություն	Մասնավոր մուլտիպլեքսորը պետք է լինի Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված իրավաբանական անձ: Օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժինը չպետք է ավել լինի հեռուստառադիոընկերության և մասնավոր մուլտիպլեքսորի որոշումների ընդունման համար անհրաժեշտ բաժնեմասերի 50 տոկոսից կամ դրան հավասար: Ավելի մեծ բաժնեմաս

կարող է սահմանվել միջազգային համաձայնագրերով:

- 10 Ոլորտ Ֆինանսական և ապահովագրական գործունեություն
- Ենթաօլորտ
- Տնտեսական գործունեության տեսակ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ ՀԴ-011-2013 64 - Ֆինանսական ծառայություններ
- Համապատասխան պարտավորություններ Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)
- Միջոցներ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենք (ՀՕ-68, 1996թ.), հոդված 4 և 14
- Նկարագրություն Բանկային գործունեությունը պետք է մատուցվի միայն իրավաբանական անձի և/կամ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված և լիցենզիավորված մասնաճյուղի կողմից:
- 11 Ոլորտ Ֆինանսական և ապահովագրական գործունեություն
- Ենթաօլորտ
- Տնտեսական գործունեության տեսակ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ (ՀԴ-011-2013) 65 - Ապահովագրական ծառայություններ
- Համապատասխան պարտավորություններ Ազգային ռեժիմ (2-րդ հոդված) Առավել բարենպաստության ռեժիմ (3-րդ հոդված)
- Միջոցներ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենք (ՀՕ-177-Ն, 2007թ.), հոդված 1 և 47
- Նկարագրություն Ապահովագրական ծառայությունը մատուցվում է միայն իրավաբանական անձի և/կամ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված և գրանցված մասնաճյուղի

կողմից:

Օտարերկրյա ապահովագրական ընկերությունները կարող են Հայաստանի Հանրապետությունում, առանց մասնաճյուղ կամ դուստր իրավաբանական անձ հիմնադրելու, հրապարակային օֆերտայի միջոցով ապահովագրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքում, եթե գրանցված են այն երկրներում, որոնք հանդիսանում են ԱՀԿ համաձայնագրի շրջանակում կնքված միջազգային համաձայնագրերի կողմ (որոնց անդամ է նաև Հայաստանի Հանրապետությունը). այդպիսի իրավաբանական անձինք կարող են միայն իրականացնել ապահովագրություն՝ ծածկելով հետևյալ ռիսկերը.

(a) ծովային փոխադրումներ, քաղաքացիական ավիացիա, տիեզերանավերի բացթողում) և ֆրախտ (ներառյալ ուղեկցող և սպասարկող անձնակազմը). նման ապահովագրությունը կարող է տարածվել փոխադրվող գույքի, փոխադրող տրանսպորտային միջոցի և նման փոխադրումից բխող ցանկացած պատասխանատվության վրա, ինչպես բոլորը միասին, այնպես էլ դրանցից յուրաքանչյուրն առանձին վերցրած.

(b) միջազգային բեռնափոխադրումներ, և

(c) վերաապահովագրություն ու ռետրոցեսիա և վերաապահովագրության հետ կապված այլ ծառայություններ:

12 Ոլորտ

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն

Ենթաոլորտ

Տնտեսական գործունեության տեսակ

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ ՀԴ-011-2013  
66 - Ֆինանսներ և ապահովագրություն

Համապատասխան պարտավորություններ

Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)

	Միջոցներ	«Արժեթղթերի շուկայի մասին» օրենք (ՀՕ-195-Ն, 2007թ.), հոդված 3, 25, 43 և 49
	Նկարագրություն	Ներդրումային ծառայությունները «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով պետք է մատուցվեն միայն իրավաբանական անձի և/կամ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված և գրանցված մասնաճյուղի կողմից:
13	Ոլորտ	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն
	Ենթաոլորտ	
	Տնտեսական գործունեության տեսակ	Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ ՀԴ-011-2013 66 - Ֆինանսներ և ապահովագրություն
	Համապատասխան պարտավորություններ	Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)
	Միջոցներ	«Ներդրումային ֆոնդերի մասին» օրենք (ՀՕ-245-Ն, 2010թ.), հոդված 55 և 60 Կենտրոնական բանկի խորհրդի 10/01 կանոնակարգ (կանոնակարգ 116-Ն, 2011թ.), հոդված 38
	Նկարագրություն	Ֆոնդի կառավարման ծառայությունը պետք է մատուցվի միայն իրավաբանական անձի և/կամ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված մասնաճյուղի կողմից:
14	Ոլորտ	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն
	Ենթաոլորտ	
	Տնտեսական գործունեության տեսակ	Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ ՀԴ-011-2013 64.92.1 - Գրավատների գործունեություն
	Համապատասխան	Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)

պարտավորություններ

Միջոցներ

«Գրավատների և գրավատնային գործունեության մասին» օրենք (ՀՕ-43-Ն, 2003թ.), հոդված 3

Նկարագրություն

Գրավատնային գործունեություն կարող է իրականացնել միայն Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից:



## Ճապոնիայի համար նախատեսված առդիր

1	Ոլորտ	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնային տնտեսություն (Բուսաբույծների իրավունքները)
	Ենթաօլորտ	
	Տնտեսական գործունեության տեսակ	<p>ՃՏԳՏՍՄ 0119 Տարբեր մշակաբույսերի աճեցում</p> <p>ՃՏԳՏՍՄ 0243 Անտառային ծառատեսակների մատղաշի տնկարարական ծառայություններ</p> <p>ՃՏԳՏՍՄ 0413 Ջրիմուռների ակվակուլտուրա</p> <p>ՃՏԳՏՍՄ 0415 Սերմերի ակվակուլտուրա</p>
	Համապատասխան պարտավորություններ	Ազգային ռեժիմ (2-րդ հոդված) Առավել բարենպաստության ռեժիմ (3-րդ հոդված)
	Միջոցներ	«Սերմերի և սածիլների մասին» օրենք (1998 թվականի թիվ 83), 10-րդ հոդված
	Նկարագրություն	<p>Օտարերկրյա անձը, որը չունի ո՛չ մշտական բնակության վայր, ո՛չ կացության կարգավիճակ (ո՛չ գործունեության իրականացման վայր՝ իրավաբանական անձի դեպքում), Ճապոնիայում չի կարող օգտվել բուսաբույծների համար սահմանված իրավունքներից կամ հարակից իրավունքներից՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.</p> <p>(a) եթե երկիրը, որի քաղաքացի է տվյալ անձը, կամ այն երկիրը, որտեղ տվյալ անձն ունի մշտական բնակության վայր կամ կացության կարգավիճակ (կամ նրա գործունեության իրականացման վայր՝ իրավաբանական անձի դեպքում), 1972 թվականի նոյեմբերի 10-ին, 1978 թվականի հոկտեմբերի 23-ին և 1991 թվականի մարտի 19-ին Ժնևում վերանայված՝ 1961 թվականի դեկտեմբերի 2-ի՝ Բույսերի նոր տեսակների պաշտպանության միջազգային կոնվենցիայի պայմանավորվող կողմ է.</p> <p>(b) եթե երկիրը, որի քաղաքացի է տվյալ</p>

անձը, կամ այն երկիրը, որտեղ տվյալ անձն ունի մշտական բնակության վայր կամ կացության կարգավիճակ (կամ նրա գործունեության իրականացման վայր՝ իրավաբանական անձի դեպքում), 1972 թվականի նոյեմբերի 10-ին և 1978 թվականի հոկտեմբերի 23-ին ժնկում վերանայված՝ 1961 թվականի դեկտեմբերի 2-ի՝ Բույսերի նոր տեսակների պաշտպանության միջազգային կոնվենցիայի (այսուհետև՝ սույն հավելվածում՝ «1978 թվականի ՈՒՊՕՎ [UPOV] կոնվենցիա») պայմանավորվող կողմ է կամ երկիր, որի նկատմամբ Ճապոնիան կիրառում է 1978 թվականի ՈՒՊՕՎ կոնվենցիան՝ 1978 թվականի ՈՒՊՕՎ կոնվենցիայի 34-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, և հետագայում ապահովում է բույսերի այն ցեղի և տեսակի պաշտպանությունը, որին պատկանում է տվյալ անձի՝ դիմումի մեջ նշված բուսատեսակը, կամ

(c) եթե տվյալ անձի քաղաքացիության երկիրը Ճապոնիայի քաղաքացիների համար ապահովում է բուսատեսակների պաշտպանություն՝ իր սեփական քաղաքացիներին տրամադրվող միևնույն պայմաններով (ներառյալ այն երկիրը, որը Ճապոնիայի քաղաքացիների համար այդպիսի պաշտպանություն է ապահովում՝ պայմանով, որ Ճապոնիան թույլ կտա այդ երկրի քաղաքացիներին օգտվելու բուսաբույծների համար սահմանված իրավունքներից կամ հարակից իրավունքներից), և հետագայում ապահովում է բույսերի այն ցեղի և տեսակի պաշտպանությունը, որին պատկանում է տվյալ անձի՝ դիմումի մեջ նշված բուսատեսակը:

## 2 Ոլորտ

Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն և հարակից ծառայություններ (բացառությամբ II հավելվածի՝ Ճապոնիայի համար նախատեսված առդիրի թիվ 8 գրառմամբ նախատեսված՝ տարածքային ջրերում, ներքին

Ենթաուլորտ Տնտեսական գործունեության տեսակ	ջրերում, բացառիկ տնտեսական գոտում և մայրցամաքային շելֆում գտնվող ձկնային տնտեսությունների)
	<p>ՃՏԳՏՍԴ 01 Գյուղատնտեսություն</p> <p>ՃՏԳՏՍԴ 02 Անտառային տնտեսություն</p> <p>ՃՏԳՏՍԴ 03 Ձկնային տնտեսություն՝ բացառությամբ ակվակուլտուրայի</p> <p>ՃՏԳՏՍԴ 04 Ակվակուլտուրա</p> <p>ՃՏԳՏՍԴ 6324 Գյուղատնտեսական կոոպերատիվներ</p> <p>ՃՏԳՏՍԴ 6325 Ձկնային տնտեսություն և ձկնամթերքի վերամշակման կոոպերատիվներ</p> <p>ՃՏԳՏՍԴ 871 Գյուղատնտեսական, անտառային տնտեսության և ձկնային տնտեսության կոոպերատիվների միություններ, այլ տեղում չդասակարգված:</p>
Համապատասխան պարտավորություններ Միջոցներ	<p>Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)</p> <p>«Արտարժույթի փոխանակման և արտաքին առևտրի մասին» օրենք (1949 թվականի թիվ 228 օրենք), 27-րդ հոդված</p> <p>Նախարարների կաբինետի «Օտարերկրյա ուղղակի ներդրումների մասին» որոշում (նախարարների կաբինետի 1980 թվականի թիվ 261 որոշում), 3-րդ հոդված</p>
Նկարագրություն	<p>«Արտարժույթի փոխանակման և արտաքին առևտրի մասին» օրենքի համաձայն՝ նախնական ծանուցման վերաբերյալ պահանջը վերաբերում է այն օտարերկրյա ներդրողներին, որոնք մտադիր են ներդրումներ կատարել Ճապոնիայում՝ գյուղատնտեսության, անտառային և ձկնային տնտեսության ու հարակից ծառայությունների ոլորտներում (բացառությամբ II հավելվածի՝ Ճապոնիայի համար նախատեսված առդիր թիվ 8 գրառմամբ նախատեսված՝ տարածքային</p>

ջրերում, ներքին ջրերում, բացառիկ տնտեսական գոտում և մայրցամաքային շելֆում գտնվող ձկնային տնտեսությունների):

- 3 Ոլորտ  
Ենթաօլորտ  
Տնտեսական  
գործունեության  
տեսակ
- Ֆինանսների կառավարում  
Բանկային գործունեություն  
ՃՏԳՏՍԴ 622 Բանկեր՝ բացառությամբ  
կենտրոնական բանկի  
ՃՏԳՏՍԴ 631 Փոքր ձեռնարկությունների  
աջակցության ֆինանսական  
հաստատություններ
- Համապատասխան  
պարտավորություններ  
Միջոցներ
- Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)
- «Ավանդների հատուցումը երաշխավորելու  
մասին» օրենք (1971 թվականի թիվ 34 օրենք),  
2-րդ հոդված
- Նկարագրություն
- Ավանդների հատուցումը երաշխավորող  
համակարգը կիրառվում է միայն այն  
ֆինանսական հաստատությունների համար,  
որոնց գլխամասային գրասենյակները  
գտնվում են Ճապոնիայի իրավազրույթյան  
ներքո:  
Ավանդների հատուցումը երաշխավորող  
համակարգը չի կիրառվում օտարերկրյա  
բանկերի մասնաճյուղերի կողմից ընդունվող  
ավանդների նկատմամբ:
- 4 Ոլորտ  
Ենթաօլորտ  
Տնտեսական  
գործունեության  
տեսակ
- Ջերմամատակարարում
- ՃՏԳՏՍԴ 3511 Ջերմամատակարարում
- Համապատասխան  
պարտավորություններ  
Միջոցներ
- Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)
- «Արտարժույթի փոխանակման և արտաքին  
առևտրի մասին» օրենք (1949 թվականի  
թիվ 228 օրենք), 27-րդ հոդված  
Նախարարների կաբինետի «Օտարերկրյա  
ուղղակի ներդրումների մասին» որոշում  
(նախարարների կաբինետի 1980 թվականի

Նկարագրություն թիվ 261 որոշում), 3-րդ հոդված  
 «Արտարժույթի փոխանակման և արտաքին առևտրի մասին» օրենքի համաձայն՝ նախնական ծանուցման վերաբերյալ պահանջը վերաբերում է այն օտարերկրյա ներդրողներին, որոնք մտադիր են ներդրումներ կատարել Ճապոնիայում՝ ջերմամատակարարման ոլորտում:

- 5 Ոլորտ  
 Ենթաօլորտ  
 Տնտեսական գործունեության տեսակ
- Տեղեկատվություն և կապի միջոցներ  
 Հեռահաղորդակցություն  
 ՃՏԳՏՍԴ 3700 Հիմնականում կառավարչական գործունեությամբ զբաղվող գլխամասային գրասենյակներ  
 ՃՏԳՏՍԴ 3711 Տարածքային կապ՝ բացառությամբ լարային հեռախոսակապի  
 ՃՏԳՏՍԴ 3731 Հեռահաղորդակցության հետ կապված ծառայություններ

Համապատասխան պարտավորություններ Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)  
 Կատարման պահանջների արգելք (6-րդ հոդված)  
 Միջոցներ «Նիպպոն թելիգրաֆ ընդ թելիֆոն քորփորեյշնի» և այլ կորպորացիաներին վերաբերող օրենք (1984 թվականի թիվ 85 օրենք), 6-րդ և 10-րդ հոդվածներ

Նկարագրություն 1. «Նիպպոն թելիգրաֆ ընդ թելիֆոն քորփորեյշն»-ը չի կարող բաժնետերերի իր գրանցամատյանում մուտքագրել անվանում ու հասցե, եթե ուղղակիորեն և/կամ անուղղակիորեն ձայնի իրավունք ունեցող՝ «a»- «c» ենթակետերում նշված անձանց թվի ընդհանուր հարաբերակցությունը հասնում կամ գերազանցում է մեկ երրորդը՝

- (a) ֆիզիկական անձ, որը չունի Ճապոնիայի քաղաքացիություն.
- (b) օտարերկրյա կառավարություն կամ նրա ներկայացուցիչ, և
- (c) օտարերկրյա իրավաբանական անձ կամ օտարերկրյա սուբյեկտ:

2. Ճապոնիայի քաղաքացիություն չունեցող որևէ ֆիզիկական անձ չի կարող ստանձնել «Նիպպոն թելիգրաֆ ընդ թելիֆոն քորփրեյշն»-ի, «Նիպպոն թելիգրաֆ ընդ թելիֆոն իսթ քորփրեյշն»-ի և «Նիպպոն թելիգրաֆ ընդ թելիֆոն ուեսթ քորփրեյշն»-ի տնօրենների խորհրդի անդամի կամ աուդիտորի պաշտոնը:

<p>6 Ոլորտ Ենթաօլորտ</p> <p>Տնտեսական գործունեության տեսակ</p>	<p>Տեղեկատվություն և կապի միջոցներ Հեռահաղորդակցություն և համացանցային ծառայություններ</p> <p>ՃՏԳՏՍՄԴ 3711 Տարածքային կապ՝ բացառությամբ լարային հեռախոսակապի</p> <p>ՃՏԳՏՍՄԴ 3712 Հեռահար կապ</p> <p>ՃՏԳՏՍՄԴ 3719 Տարբեր տեսակի ֆիքսված կապեր</p> <p>ՃՏԳՏՍՄԴ 3721 Շարժական կապ</p> <p>ՃՏԳՏՍՄԴ 401 Համացանցի հետ կապված ծառայություններ</p>
<p>Համապատասխան պարտավորություններ Միջոցներ</p>	<p>Ծանոթագրություն. ՃՏԳՏՍՄԴ 3711, 3712, 3719, 3721 կամ 401 ծածկագրերին դասվող՝ այս գրառման մեջ ներառված գործունեության տեսակները սահմանափակվում են այն գործունեության տեսակներով, որոնք, «Հեռահաղորդակցության գործունեության մասին» օրենքի 9-րդ հոդվածի (1984 թվականի թիվ 86 օրենք) համաձայն, ենթակա են պարտադիր գրանցման:</p> <p>Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)</p>
<p>Նկարագրություն</p>	<p>«Արտարժույթի փոխանակման և արտաքին առևտրի մասին» օրենք (1949 թվականի թիվ 228 օրենք), 27-րդ հոդված Նախարարների կաբինետի «Օտարերկրյա ուղղակի ներդրումների մասին» որոշում (նախարարների կաբինետի 1980 թվականի թիվ 261 որոշում), 3-րդ հոդված «Արտարժույթի փոխանակման և արտաքին առևտրի մասին» օրենքի համաձայն՝ նախնական ծանուցման վերաբերյալ պահանջը</p>

վերաբերում է այն օտարերկրյա ներդրողներին, որոնք մտադիր են ներդրումներ կատարել Ճապոնիայում՝ հեռահաղորդակցության գործունեության և համացանցի վրա հիմնված ծառայությունների ոլորտում:

7 Ոլորտ  
Ենթաօլորտ  
Տնտեսական  
գործունեության տեսակ  
Համապատասխան  
պարտավորություններ  
Միջոցներ

Արտադրություն  
Դեղամիջոցների և դեղերի արտադրություն  
ՃՏԳՏՍԴ-1653 Կենսաբանական  
պատրաստուկներ  
Ազգային ռեժիմը (2-րդ հոդված)

Նկարագրություն

«Արտաբժույթի փոխանակման և արտաքին առևտրի մասին» օրենք (1949 թվականի թիվ 228 օրենք), 27-րդ հոդված  
Նախարարների կաբինետի «Օտարերկրյա ուղղակի ներդրումների մասին» որոշում (նախարարների կաբինետի 1980 թվականի թիվ 261 որոշում), 3-րդ հոդված  
«Արտաբժույթի փոխանակման և արտաքին առևտրի մասին» օրենքի համաձայն՝ նախնական ծանուցման վերաբերյալ պահանջը վերաբերում է այն օտարերկրյա ներդրողներին, որոնք մտադիր են ներդրումներ կատարել Ճապոնիայում՝ կենսաբանական պատրաստուկների արտադրության ոլորտում: Ավելի ստույգ, «կենսաբանական պատրաստուկների արտադրության ոլորտ»-ը առնչվում է այն հաստատությունում իրականացվող տնտեսական գործունեությանը, որը հիմնականում արտադրում է պատվաստանյութեր, շիճուկ, տոքսոիդ, հակատոքսին կամ վերոնշյալ արտադրանքին համանման որոշ պատրաստուկներ կամ արյունից ստացված արտադրանք:

8 Ոլորտ  
Ենթաօլորտ  
Տնտեսական  
գործունեության տեսակ

Արտադրություն  
Կաշվի և կաշվից ստացվող արտադրանքի  
արտադրություն  
ՃՏԳՏՍԴ-1189 Մանածագործական  
հագուստ և պարագաներ, այլ

ՃՏԳՏՍՄԴ1694	տեղում չդասակարգված
ՃՏԳՏՍՄԴ192	Ժելատին և հարակցանյութեր
	Ռետինե և պլաստմասսայից
	կոշկեղեն և դրա օժանդակ
	պարագաներ
ՃՏԳՏՍՄԴ2011	Կաշվի դաբադում և
	վերջնամշակում
ՃՏԳՏՍՄԴ2021	Մեխանիկական
	սարքվածքներում և
	տեխնիկական այլ
	նպատակներով
	օգտագործվող կաշվից
	արտադրանք՝ բացի
	ձեռնոցներից և
	թաթմաններից
ՃՏԳՏՍՄԴ2031	Կաշվե կոշկեղենի կոշկերեսի
	ձևվածքներ և օժանդակ
	պարագաներ
ՃՏԳՏՍՄԴ2041	Կաշվե կոշկեղեն
ՃՏԳՏՍՄԴ2051	Կաշվե ձեռնոցներ և
	թաթմաններ
ՃՏԳՏՍՄԴ2061	Ճամփորդական
	պարագաներ
ՃՏԳՏՍՄԴ207	Ձեռքի պայուսակներ և փոքր
	ճամպուրակներ
ՃՏԳՏՍՄԴ2081	Մորթով կաշի
ՃՏԳՏՍՄԴ2099	Դաբադած կաշվից զանազան
	արտադրանք
ՃՏԳՏՍՄԴ3253	Սպորտային և
	մարմնամարզական
	ապրանքներ

Նշում 1՝ ՃՏԳՏՍՄԴ1189 կամ 3253  
 ծածկագրերին դասվող՝ այս գրառման մեջ  
 ներառված գործունեության տեսակները  
 սահմանափակվում են կաշվե և կաշվից  
 ստացվող արտադրանքի արտադրությանն  
 առնչվող գործունեության տեսակներով:  
 Նշում 2՝ ՃՏԳՏՍՄԴ1694 ծածկագրին դասվող՝  
 այս գրառման մեջ ներառված գործունեության  
 տեսակները սահմանափակվում են  
 կենդանական ծագման սոսնձի (նիկավա) և



Համապատասխան պարտավորություններ Միջոցներ՝	<p>ժելատինի արտադրությանն առնչվող գործունեության տեսակներով: Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)</p>
Նկարագրություն	<p>«Արտարժույթի փոխանակման և արտաքին առևտրի մասին» օրենք (1949 թվականի թիվ 228 օրենք), 27-րդ հոդված Նախարարների կաբինետի «Օտարերկրյա ուղղակի ներդրումների մասին» որոշում (նախարարների կաբինետի 1980 թվականի թիվ 261 որոշում), 3-րդ հոդված «Արտարժույթի փոխանակման և արտաքին առևտրի մասին» օրենքի համաձայն՝ նախնական ծանուցման վերաբերյալ պահանջը վերաբերում է այն օտարերկրյա ներդրողներին, որոնք մտադիր են ներդրումներ կատարել Ճապոնիայում՝ կաշվի և կաշվից ստացվող արտադրանքի արտադրության ոլորտում:</p>
9 Ոլորտ	Նավի պետական պատկանելիությանը վերաբերող հարցեր
Ենթաօլորտ Տնտեսական գործունեության տեսակ՝ Համապատասխան պարտավորություններ	<p>Ազգային ռեժիմ (2-րդ հոդված) Կատարման պահանջների արգելք (6-րդ հոդված)</p>
Միջոցներ	«Նավերի մասին» օրենք (1899 թվականի թիվ 46 օրենք), 1-ին հոդված
Նկարագրություն	<p>Նավին տրվում է Ճապոնիայի պետական պատկանելիություն այն դեպքում, եթե դրա սեփականատերը Ճապոնիայի քաղաքացի է կամ Ճապոնիայի օրենքներին և կանոնակարգերին համապատասխան ստեղծված ընկերություն է, որի բոլոր ներկայացուցիչները և գործերը կառավարող ղեկավար անձնակազմի անդամների ոչ պակաս, քան երկու երրորդը Ճապոնիայի քաղաքացի է:</p>

<p>10 Ոլորտ Ենթաօլորտ Տնտեսական գործունեության տեսակ Համապատասխան պարտավորություններ Միջոցներ</p>	<p>Հանքարդյունաբերություն</p>	<p>ՃՏԳՏՍՄ 05 Քարի և խճի արդյունահանում Ազգային ռեժիմ (2-րդ հոդված) «Հանքարդյունաբերության մասին» օրենք (1950 թվականի թիվ 289 օրենք), 2-րդ և 3-րդ գլուխներ Միայն Ճապոնիայի քաղաքացին կամ Ճապոնիայի իրավաբանական անձը կարող է ունենալ ընդերքօգտագործման իրավունքներ կամ ընդերքօգտագործմանն առնչվող վարձակալության իրավունքներ:</p>
<p>Նկարագրություն</p>		
<p>11 Ոլորտ Ենթաօլորտ Տնտեսական գործունեության տեսակ</p>	<p>Նավթարդյունաբերություն</p>	<p>Հում նավթի և բնական գազի արտադրություն Նավթի վերամշակում Քսայուղեր և թանձր քսուքներ (նավթի վերամշակման գործարաններում չպատրաստվող) Ճանապարհային ծածկույթի համար նախատեսված նյութեր Այլ նավթամթերք և ածխամթերք Սովորական պահեստավորում՝ բացառությամբ սառնարանային պահեստավորման Սառնարանային պահեստավորում Նավթ Բենզոկալյաններ Վառելիքի պահեստներ՝ բացառությամբ</p>
	<p>ՃՏԳՏՍՄ 053</p>	
	<p>ՃՏԳՏՍՄ 1711</p>	
	<p>ՃՏԳՏՍՄ 1721</p>	
	<p>ՃՏԳՏՍՄ 1741</p>	
	<p>ՃՏԳՏՍՄ 1799</p>	
	<p>ՃՏԳՏՍՄ 4711</p>	
	<p>ՃՏԳՏՍՄ 4721</p>	
	<p>ՃՏԳՏՍՄ 5331</p>	
	<p>ՃՏԳՏՍՄ 6051</p>	
	<p>ՃՏԳՏՍՄ 6052</p>	

ԸՏԳՏՍԴ-9299 բենզակայանների  
Այլ գործարար  
ծառայություններ՝ այլ տեղում  
չդասակարգված

Նշում 1՝ ԸՏԳՏՍԴ-1741, 1799, 4711, 4721 կամ  
6052 ծածկագրերին դասվող՝ այս գրառման  
մեջ ներառված գործունեության տեսակները  
սահմանափակվում են

նավթարդյունաբերության հետ կապված  
գործունեության տեսակներով:

Նշում 2՝ ԸՏԳՏՍԴ-9299 ծածկագրին դասվող՝  
այս գրառման մեջ ներառված գործունեության  
տեսակները սահմանափակվում են  
հեղուկացված նավթային գազի  
արդյունաբերությանն առնչվող գործունեության  
տեսակներով:

Համապատասխան  
պարտավորություններ  
Միջոցներ

Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)

«Արտարժույթի փոխանակման և արտաքին  
առևտրի մասին» օրենք (1949 թվականի  
թիվ 228 օրենք), 27-րդ հոդված

Նախարարների կաբինետի «Օտարերկրյա  
ուղղակի ներդրումների մասին» որոշում  
(նախարարների կաբինետի 1980 թվականի  
թիվ 261 որոշում), 3-րդ հոդված

Նկարագրություն

«Արտարժույթի փոխանակման և արտաքին  
առևտրի մասին» օրենքի համաձայն՝  
նախնական ծանուցման վերաբերյալ պահանջը  
վերաբերում է այն օտարերկրյա ներդրողներին,  
որոնք մտադիր են ներդրումներ կատարել  
Ճապոնիայում՝ նավթի արդյունաբերության  
մեջ: Բոլոր օրգանական քիմիական նյութերը,  
ինչպիսիք էթիլենը, էթիլենգլիկոլը և  
պոլիկարբոնատներն են,  
նավթարդյունաբերության շրջանակներից  
դուրս են: Այդպիսով, «Արտարժույթի  
փոխանակման և արտաքին առևտրի մասին»  
օրենքով նախատեսված նախնական  
ծանուցումը չի պահանջվում այս արտադրանքի  
արտադրության ոլորտում ներդրումների  
կատարման համար:

12	Ոլորտ	Անվտանգության պահպանության ծառայություններ
	Ենթաօլորտ Տնտեսական գործունեության տեսակ	ՃՏԳՏՍՄԴ 923 Պահակային ծառայություններ
	Համապատասխան պարտավորություններ Միջոցներ՝	<p>Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)</p> <p>«Արտարժույթի փոխանակման և արտաքին առևտրի մասին» օրենք (1949 թվականի թիվ 228 օրենք), 27-րդ հոդված</p> <p>Նախարարների կաբինետի «Օտարերկրյա ուղղակի ներդրումների մասին» որոշում (1980 թվականի թիվ 261 նախարարների կաբինետի որոշում), 3-րդ հոդված</p> <p>«Արտարժույթի փոխանակման և արտաքին առևտրի մասին» օրենքի համաձայն՝ նախնական ծանուցման վերաբերյալ պահանջը վերաբերում է այն օտարերկրյա ներդրողներին, որոնք մտադիր են ներդրումներ կատարել Ճապոնիայում՝ անվտանգության պահպանության ծառայությունների ոլորտում:</p>
	Նկարագրություն	
13	Ոլորտ	Փոխադրումներ
	Ենթաօլորտ Տնտեսական գործունեության տեսակ	<p>Օդային փոխադրումներ</p> <p>ՃՏԳՏՍՄԴ 4600 Հիմնականում կառավարչական գործունեությամբ զբաղվող գլխամասային գրասենյակներ</p>
	Համապատասխան պարտավորություններ	<p>ՃՏԳՏՍՄԴ 4611 Օդային փոխադրումներ</p> <p>Ազգային ռեժիմ (2-րդ հոդված)</p> <p>Առավել բարենպաստության ռեժիմ (3-րդ հոդված)</p> <p>Կատարման պահանջների արգելք (6-րդ հոդված)</p>
